2009, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (289)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում մեծազնիվ տիկնանց եւ օրիորդաց եւ բերում Մեր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Մարտի 8-ի տոնական առիթով:*

*Ազգային մեր կյանքն այսօր նույնպես արդյունավորվում եւ զորանում է այն մեծ ավանդով, որ բերում են կանայք մատաղ սերնդի դաստիարակության եւ ինքնության կերտման, ընտանիքի ամրության պահպանման աստվածահաճո առաքելությամբ: Մեր դժվարին պատմության ճանապարհին հայ մայրերը, քույրերն ու դուստրերը օրինյալ ջանք ու նվիրում են ներդրել՝ հանուն մեր ժողովրդի բարօր ու լուսավոր գալիքի:*

*Մեր մաղթանքն է, որ կանայք մշտարթուն նույն նվիրումով, արիական ոգով, քաջառողջ եւ եռանդաշատ շարունակեն իրենց սուրբ գործը, եւ Բարին Աստված տոնական այս օրը երկնառաք շնորհներով ուրախություն ու լուսավորություն բերի տիկնանց եւ օրիորդաց սրտերին ու հոգիներին՝ զորացնելով հույսի ու սիրո մեջ:*

*Աղոթքով առ Աստված հայցում ենք Բարձրյալի ամենազոր Աջի պահպանությունը սիրելի մեր մայրերին, քույրերին ու դուստրերին՝ ի խնդիր աստվածասեր մեր ժողովրդի եւ հայրենական մեր կյանքի առաջընթացի եւ զորացման:*

*Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները թող լինեն ամենքիդ հետ. Ամեն:*

*4 մարտի*

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էստոնիայի դեսպանին



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Էստոնիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Թոմաս Լուքին:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով դեսպանին, ուրախությամբ արձանագրեց, որ երկու պետությունների միջեւ կապերն ավելի են սերտանում: Հայոց Հայրապետը կարեւորեց հատկապես հայ համայնքի դերակատարությունն այդ կապերի ամրապնդման գործում: Ի դեմս Հայաստանում Էստոնիայի դեսպանի՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Էստոնիայի իշխանություններին՝ տեղի հայ համայնքի հանդեպ բարյացակամ վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Էստոնիայի կրոնական կյանքին, Հայ Առաքելական Եկեղեցու առաքելությանը, ժամանակակից մարտահրավերներին:

## ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

*«Ընդ անառակին որդւոյ*
*գոչեմք առ հայրդ գթած.*
*մեղաք յերկինս եւ առաջի*
*քո, քաւիչ յանցանաց»*
*(Շարակնոց)*

Մեծ պահքի երրորդ կիրակին իր անվանումն ստացել է ի հիշատակ Ավետարանում տեղ գտած անառակ որդու մասին հանրահայտ առակի: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատմած առակներից թերեւս ամենագեղեցիկն այս պատմությունն է:

Մի հարուստ մարդ երկու զավակ ուներ: Կրտսերը, վերցնելով ժառանգության իր բաժինը, գերադասում է վատնել այն հայրենիքից հեռու՝ օտարության մեջ: Երբ անկարգ ու շվայտ կյանքը հասցնում է նրան աղքատության շեմին, նա ստիպված խոզապահ է դառնում: Բայց այդ աշխատանքը չի հագեցնում անգամ նրա քաղցը, եւ նա վերհիշում է իր նախկին կյանքը՝ հայրական ապահով ու խաղաղ հարկի տակ, եւ դրան հետեւող իր մեղսալից վարքի հետեւանքը: Նա խոր վշտում է ապրում իր գործած արարքի համար եւ որոշում վերադառնալ հոր մոտ ու խոստովանել այդ մասին: Երբ տուն է հասնում,



«հայրը, տեսնելով որդուն եւ ուրախությամբ ընդառաջ գալով, գրկախառնվում ու համբուրում է նրան: Որդին, անակնկալի եկած, ասում է հորը. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու» (Ղուկ. ԺԵ 21): Իսկ հայրը պատվիրում է իր ծառաներին գեղեցիկ պատմուճան ու մատանի բերել որդուն, ապա ամենապարարտ եզը մորթել եւ խնջույք կազմակերպել՝ ի պատիվ նրա գալուստյան:

Սակայն ավագ որդին, որ միշտ հնազանդ էր իր հորը, չարանում է նրա դեմ՝ չհասկանալով հոր արարքի խորհուրդը: Հայրը, հանգստացնելով նրան, ասում է. «Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես, եւ ամեն ինչ, որ իմն է, քոնն է, բայց պետք է ուրախ լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացավ, կորած էր եւ գտնվեց»:

Այս առակով ամենակալ Տերը զղջման ու ապաշխարության է մղում այն մարդկանց, ովքեր գտնվում են մեղսալից սովորույթների կապանքներում եւ չեն կարողանում ու չեն ցանկանում ազատվել դրանցից: Առակը մեզ ուսուցանում է գիտակցել ու հասկանալ մեր գործած մեղքը, զղջալ ու բարձրաձայն խոստովանել, գիտակցել քավության եւ թողության գինը ու չկրկնելու ուղի ընտրել, քանզի առանց մեղքի գիտակցության չկա ներում:

Այդպես կործանարար է Աստծուց հեռանալը եւ փրկարար՝ Նրան դառնալը: Երկնային Հոր սերը չի լքում մարդուն նույնիսկ այն ժամանակ, երբ նա թափառում է մեղքի շավիղներով, ննջում ունայնության եւ աշխարհիկ «քաղցրությունների» գրկում՝ առանց նկատելու իր ոտքերի տակ գոյացած անդունդը: Ինքը՝ Հիսուս Քրիստոսը, համաձայն Իր խոստման, կանգնած է նրա սրտի շեմին, բախում է, որպեսզի վերջինս Իր առջեւ բացի դռներն ու ընդունի Իրեն իր հոգու տաճարում: Եվ ահա մեղավորն արթնանում է հոգեւոր քնից եւ գալիս այն մտքին, որ իր միակ հանգստությունն ու խաղաղությունը երկնային Հայրն է:

Այսպիսով, ճշմարիտ զղջումով, ապաշխարությամբ եւ խոստովանությամբ բացվում են արքայության դռները յուրաքանչյուր մեղավորի համար: Իսկ ավագ որդու մասին հիշատակությունը վերաբերում է այն հրեաներին, որոնք զայրույթով ու վրդովմունքով էին տանում մեղավորների ու հեթանոսների հանդեպ ունեցած Հիսուս Քրիստոսի կարեկցական վերաբերմունքը եւ որպես հին ուխտի ներկայացուցիչներ՝ հրաժարվում երկնքի արքայություն մտնելուց:

Անառակի կիրակիի նախընթաց շաբաթ օրը տոնվում է սբ Կյուրեղ Երուսաղեմացու, Կյուրեղ եպիսկոպոսի ու նրա մոր՝ Աննայի հիշատակը:

***Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Հայոց ցեղասպանության ժամանակ արեւմտահայերի ամենալավ կազմակերպված եւ ամենաարդյունավետ ինքնապաշտպանական մարտերը ծավալվեցին Վան քաղաքում: Վանի հերոսամարտի մասին խոսեցինք նախորդ համարում: Շարունակելով նախորդ համարի թեման՝ այս համարում ներկայացնում ենք Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրերում ծավալված ինքնապաշտպանական մարտերը թուրք ջարդարար ուժերի դեմ:*

*Հայոց ցեղասպանության ընթացքում բազմաթիվ վայրերում հայերը զենքը ձեռքներին պատվով մահ ընդունեցին: Այնտեղ, որտեղ հայերը դիմում էին ինքնապաշտպանության, տալիս էին ավելի քիչ զոհեր, քան այնտեղ, որտեղ լուռ ու մունջ ենթարկվում էին գաղթի հրամանին: Շատ վայրերում, ինչպես օրինակ՝ Մուսա Լեռում, ինքնապաշտպանական մարտերը թույլ տվեցին մեծ թվով հայերի փրկվել թուրքական յաթաղանից:*



ա) **Սասունի ինքնապաշտպանություն.** Դարեր շարունակ օսմանյան իշխանությունները ստիպված էին հաշվի նստել Սասունի քաջարի բնակչության հետ եւ չէին կարողանում ամբողջությամբ ընկճել սասունցիների ազատասեր ոգին:

1894 թ. եւ 1904 թ. թուրքերն արդեն ճաշակել էին սասունցիների ապստամբ ոգու պարգեւած տհաճությունները: Ճիշտ է՝ այդ ապստամբություններն ավարտվեցին պարտությամբ, սակայն Սասունի պարագայում թուրքերը լավ էին ընկալում իրենց հաղթանակի պայմանական լինելը, ուստի ջարդերի ժամանակ նրանք առանձնակի վայրենություն ցուցաբերեցին սասունցիների նկատմամբ: Սասունն առաջիններից մեկն էր, ուր հայտնվեցին թուրք արյունարբուները:

Մինչ թուրք ջարդարարների ժամանելը Սասնա հայերը հասցրին պատրաստվել ինքնապաշտպանության՝ սեփական տրամադրության տակ ունենալով ընդամենը 1 000 հնատիպ հրացան: Ինքնապաշտպանական ուժերը բաժանվեցին առանձին խմբերի, որոնց հրամանատարներն էին Ռուբենը, Փեթարա Մանուկը, Ստեփան վարդապետը եւ ուրիշներ:

Թուրքական ջարդարարական ուժերը Սասուն ժամանեցին 1915 թ. սկզբին: Նրանք հիմնական գրոհներից մեկն ուղղեցին իրենց կողմից խիստ ատելի Տալվորիկ գյուղի վրա, սակայն 1915 թ. մարտին ինքնապաշտպանական ուժերին հաջողվեց ետ շպրտել ջարդարար ուժերին:

Հաջորդ 2 ամիսներին թուրքական ուժերը հրետանու օգնությամբ կարողացան հաջող մարտեր մղել Արտխոնքի, Իշխանաձորի եւ հարակից շրջանների հայության դեմ եւ ստիպեցին նրանց նահանջել դեպի Անդոկ սարը: Հաջողությունը թուրքերին ուղեկցեց նաեւ հունիս ամսին: Նրանք մեծ կորուստներով գրավեցին Փսանքի շրջանը, որտեղի հայությանը օգնության էին հասել տալվորիկցիների ջոկատները: Չնայած տալվորիկցիներից կրած ծանր կորուստներին՝ հունիսին թուրքերը Սասունի պաշտպաններին սեղմեցին նեղ օղակի մեջ՝ նրանց թողնելով 1 000 քառակուսի կիլոմետրից մի փոքր ավելի տարածք:

Այս հաջողությունից ոգեւորված՝ ջարդարարները հուլիսին անցան վճռական գրոհի եւ բնակչության դեմ հանեցին 30 000-ից ավելի զինվոր: Շուտով նրանք գրավեցին Կուրտիկը, բայց ամսվա երկրորդ կեսին կորցրին Շենիկը, որտեղ հայերի ձեռքն անցան թնդանոթներ եւ այլ տեսակի զինամթերք: Սակայն սա սասունցիների վերջին հաջողությունն էր:

Մշո հայության ոչնչացումն իրականացնելու նպատակով հուլիսի վերջին եւ օգոստոսի սկզբին թուրք-քրդական ուժերը համալրվեցին եւ ընկճեցին սասունցիների դիմադրության վերջին օջախները: Ճիշտ է, ոմանց հաջողվեց մարտերով ճեղքել պաշարման օղակը եւ փրկվել, սակայն պաշտպանների ճնշող մեծամասնությունը կոտորվեց ջարդարարների կողմից:

Այնուհետեւ ջարդարարներն զբաղվեցին իրենց սիրելի գործով՝ կոտորածով եւ թալանով, ինչի արդյունքում Սասունի բնակչության շուրջ 55 %-ը կազմող 60 000 հայերից ավելի քան 45 000-ը կոտորվեց: Մնացած մասը, ապաստանելով լեռներում, հետագայում (1916 թ. գարուն) իջավ ռուսական զորքերի կողմից վերցված Մշո դաշտ եւ անցավ Արեւելյան Հայաստան: Նրանք հաստատվեցին մասնավորապես Աշտարակի եւ Թալինի շրջաններում (ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզ):

Այսօր Սասունի շուրջ մեկ տասնյակ գյուղերում մահմեդականացված բազմաթիվ հայեր են ապրում, որոնց ընդգրկում են տեղական քրդական բնակչության մեջ՝ ելնելով նրանց՝ քրդախոս լինելու հանգամանքից:

***Սասունի 6-ամյա ինքնապաշտպանությունը հայոց պատմության ամենահերոսական էջերից մեկն է: Ինքնապաշտպանական մարտերը թույլ տվեցին շուրջ 15 000 հայի փրկվել թուրքական յաթաղանից եւ հետագայում ապաստանել Արեւելյան Հայաստանում:***

բ) **Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանություն.** Շապին-Գարահիսարը (Շաբին-Կարահիսար) Արեւմտյան Հայաստանի Սեբաստիայի վիլայեթի գավառներից մեկն էր՝ համանուն կենտրոնով (այժմ՝ Գիրեսուն իլի Շաբին-Կարահիսար գավառը): Այն համապատասխանում է Փոքր Հայքի Նիկոպոլիս գավառի մի մասին, իսկ քաղաքը հավանաբար համապատասխանում է Մավրոկաստրոն (հուն. «Սեւ բերդ» կամ «Սեւաբերդ») բերդաքաղաքին: Այն նվաճվել էր թուրք-օսմանցիների կողմից դեռեւս 15-րդ դ. (1473 թ.) եւ հենց այդ ժամանակ էլ ստացել էր Շաբին Գարահիսար անվանումը:

Շապին-Գարահիսարը 17-18-րդ դդ., չնայած թուրքական ծանր քաղաքականությանը, եղել է բավականին վաճառաշահ քաղաք:

19-րդ դ. վերջին թուրքական կառավարությունը որոշեց հաշվեհարդար տեսնել շապինգարահիսարցիների հետ: Նախ (1894 թ. ամառ) նրանք կազմակերպեցին ընդհարումներ հայերի եւ մահմեդականների միջեւ, ձերբակալեցին մի խումբ հայ մտավորականների, փակեցին հայկական դպրոցները, արգելեցին հայերի տնտեսական ազատ գործունեությունը, սակայն դրանով չբավարարվեցին: Թուրքական քաղաքականությունն իր գագաթնակետին հասավ 1895 թ. աշնանը, երբ թուրքերը դիմեցին բացահայտ ջարդերի, որոնք շարունակվեցին մինչեւ 1896 թ. վերջը: Այս ջարդերի ընթացքում զոհվեց ավելի քան 5 000 հայ:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Շապին-Գարահիսարի գավառում ապրում էր 25 000 հայ, այդ թվում՝ ավելի քան 7 000-ը՝ Շապին-Գարահիսար քաղաքում, 3-4 հազարական՝ Անդրեաս եւ Թամզարա ավաններում: Այստեղ թուրքական ցեղասպան քաղաքականությունը գործի դրվեց դեռեւս 1914 թ. աշնանը: Գավառում տեղաբաշխված թուրքական 15 000-անոց զորամասն իրագործել է հայերի ջարդեր, ունեցվածքի բռնագրավումներ, բանակ զորակոչվածների սպանություններ: Նախ՝ զորակոչվել եւ սպանվել է 300 երիտասարդ, իսկ մնացածը, որոշակի հարկ վճարելով նրանց ծառայության դիմաց, «փրկվել»: Սակայն շուտով «ազատվածները» նույնպես զորակոչվել են բանակ՝ այն պատճառաբանությամբ, թե «ռազմաճակատը մոտենում է Շապին-Գարահիսարի գավառին»: Հաջորդ տարվա գարնանը ձերբակալվել է շուրջ հինգ տասնյակ մտավորական:

Շապին-Գարահիսարի հայության վերջնական ոչնչացման քաղաքականությունը գործի դրվեց 1915 թ. մայիս-հունիս ամիսներին: Նրանք աստիճանաբար շրջապատել են քաղաքի հայկական թաղամասը, ինչպես նաեւ ազատ գործելու հնարավորություն են տվել բանտերից ազատված հանցագործ-մարդասպաններին եւ հանցագործ-թալանչիներին, օգտագործել նաեւ քուրդ-չերքեզական ջոկատները: Տիրում էր համատարած թալան ու կոտորած:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

*Սկիզբը՝ թիվ 4*

Ի՞նչ է մեծամտությունը: Փառաբանվելը գրեթե նույնն է, ինչ սեփական արժանիքներով Աստծուն հանդիմանելը: Մարդկային կյանքում, եթե մեկը նվեր է տալիս իր մերձավորին, բայց սկսում է նրա առաջ փառաբանվել, ապա նրա ողորմությունը ոչնչի է վերածում եւ ոչնչացնում մերձավորի բարեկամությունը, ինչի համար էլ նման մարդը զազրելի է: Այդ պատճառով էլ Աստված, հոգ տանելով մեր կյանքի մասին եւ ցանկանալով մեզ հեռու պահել այս կործանարար կրքից, ուսուցում է՝ ասելով. «Երբ կատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե՝ անպիտան ծառաներ ենք» (Ղուկ. ԺԷ 10): Իսկ եթե չկատարենք պատվիրվածը, ապա իրավացի կլինի նույնիսկ անպիտան ծառաներ կոչվելը, որովհետեւ մեծ է մեր Աստվածը, մեծ են նաեւ Նրա հաստատուն պարգեւները:

Քեզ խրատելու համար էր, որ սովորեցրեց մեզ ոչ միայն խոնարհությամբ խոսել, այլեւ խոնարհամտություն ցուցաբերել: Տերը խրատեց մեզ հենց գործով, երբ գոտեվորվեց սրբիչով եւ լվաց առաքյալների ոտքերը: Ինչի համար ասում է. «Սովորեցեք Ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեզ համար հանգիստ պիտի գտնեք» (Մատթ. ԺԱ 29): Երբ ակամա վիշտ ես կրում կամավորի պես, այդ ժամանակ մտածիր, թե հասել ես քաջարի եւ խոնարհի այրի մակարդակին:

Բայց զարհուրանքով իմացա, որ թույլ ես տվել քո մեջ այնպիսի խորհուրդներ հաստատվելու, որոնք քեզ անթույլատրելի բաներ են ներշնչում: Եվ հարցնում եմ. մի՞թե պիտի սքանչանաս այն օրը: Դրան հակառակ՝ շատերը վնասեցին իրենց առողջ դատողությունն այս խորհուրդների պատճառով: Հարցրու ինքդ քեզ, թե ո՞վ ես դու: Ի՞նչ աստիճանի ես հասել: Մի՞թե դու Եղիան ես: Մի՞թե նրա նման հրաշքներ ես գործում. չէ որ նա աղոթքով փակեց երկինքը, «երկրի վրա երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց» (Հակ. Ե 17), եւ նորից նրա աղոթքներով երկինքն անձրեւ տվեց, եւ նորից երեք անգամ աղոթելով՝ երկնքից կրակ իջեցրեց: Իսկ դու ձեռք ե՞ս բերել ամբողջ հավատքը: Ներկայացրու փորձով, ցույց տուր նշաններ եւ հրաշքներ, աղոթքով մեռելներին հարություն տուր, կույրերի աչքերին տեսողություն տուր, քշիր դեւերին, մաքրիր բորոտներին, բուժիր կաղերին, քայլիր ծովի վրայով, ինչպես չոր հողի վրա, ջուրը գինու վերածիր, հինգ հացով եւ երկու ձկով, աղոթքներովդ կշտացրու բազմաքանակ մարդկանց: Որովհետեւ զուր չէ ասված. «Ով հավատում է Ինձ, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում, եւ դրանցից ավելի մեծերը կանի» (Հովհ. ԺԴ 12):

Բայց հնարավոր է, որ որեւէ մեկը խոսակցության մեջ մտնի եւ ասի. «Այդ պատճառով, եթե մեկը չկատարի այդպիսի աստվածային գործեր, ապա նա չի՞ կարող փրկության հույս ունենալ: Փրկության հույսը մենք մեր մեջ ունենք՝ նման գործեր չկատարելով էլ, եթե միայն խոստովանենք մեր տկարությունը եւ մեր թերահավատությունը: Տկարներին պետք է գթասրտություն եւ ոչ թե փառաբանում: Իսկ եթե գթասրտության կարիք ունենք, ապա խոնարհամտության գործեր անենք, որպեսզի խոնարհամտությամբ մեր վրա բերենք Աստծո առատաձեռնությունը: Քանզի գրված է. «Տերը մեզ հիշեց մեր թշվառության մեջ եւ փրկեց մեզ մեր թշնամիների ձեռքից» (Սղմ. ՃԼԵ 23-24): Եվ նորից. «Ես խոնարհ եղա, եւ Տերն ինձ փրկեց» (Սղմ. ՃԺԴ 5): Բայց եթե մեր մասին մեծ կարծիք ունենք, ինչը նման է քամու վրա հենվելուն, ապա ինքներս մեզ անդունդն ենք գլորում: Դրա համար մի թող, որ քո մեջ մտնի հպարտության հիվանդությունը, որպեսզի թշնամին հանկարծ չհափշտակի բանականությունդ: Սթափվի՛ր ինքնահաճության ճոռոմ խորհուրդներից: Թակարդ մի՛ սարքիր ոտքերիդ առաջ: Խոնարհամտությամբ մաքրի՛ր միտքդ այդ մահաբեր թույնից:



Թող քեզ աղբն իր տնից մաքրողի օրինակը խրատի: Նա կռանում է հատակին եւ մաքրում այն: Առավել եւս հարկավոր է մեծ ջանքով կռանալ եւ խոնարհեցնել ինքդ քեզ՝ հոգիդ մաքրելու համար, թույլ չտալ նրան այն, ինչ ատելի է Աստծո առջեւ: Քանզի խոնարհ հոգում բնակվում են Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին: Գրված է. «Ի՞նչ կապ ունի արդարությունը անօրինության հետ, եւ կամ ի՞նչ հարաբերություն լույսի եւ խավարի միջեւ. եւ կամ ի՞նչ միաբանություն Քրիստոսի եւ Բելիարի միջեւ. կամ ի՞նչ առնչություն ունի հավատացյալն անհավատի հետ. կամ ի՞նչ նմանություն ունի Աստծո տաճարը մեհյանների հետ»:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ ՎԱՀԿԱՑԻ
## (1430-1439)

*Սկիզբը՝ թիվ 4*

Մի քանի խոսք Ֆլորենցիայի ժողով ուղարկված հայ պատվիրակության մասին: Հարկ է նշել, որ Կղեմես Ե պապի օրոք՝ 1309 թվին, պապական աթոռը տեղափոխվեց Ֆրանսիայի Ավինիոն քաղաքը եւ մինչեւ 1377 թվականը համարվում էր պապերի Ավինիոն գերության շրջան: Այստեղ աթոռակալեց 7 պապ: Միայն Գրիգոր ԺԱ պապի ժամանակ պապական աթոռը կրկին տեղափոխվեց Հռոմ, սակայն շատ չանցած՝ 1378-ին, նա մահացավ: Հետո միաժամանակ երկու պապ ընտրվեց. Ուրբանոս Զ-ն՝ Հռոմում, Կղեմես Ե-ն՝ Ավինիոնում: Այսպես սկսվեց Արեւմտյան հերձված կոչված պառակտումը Կաթոլիկ Եկեղեցում: Ուրբանոսին հաջորդեցին Բոնիֆակիոս պապը՝ 1379-ին, Ինովկենտիոս Է-ն՝ 1404-ին, եւ Գրիգոր ԺԲ-ն՝ 1406-ին: Ավինիոնում Կղեմեսին հաջորդեց Բենեդիկտոս ԺԳ-ն՝ 1394-ին: Հերձվածը վերացնելու համար հրավիրվեց Պիզայի ժողովը Իտալիայում 1409 թվին՝ մարտի 26-ին: Ժողովը երկու պապին էլ հրձվածող ճանաչեց, եւ հունիսի 26-ին պապ ընտրվեց Ալեքսանդր Ե-ն: Ըստ էության՝ ժողովը շատ բան չարեց, բացի երրորդ պապ ընտրելուց: Ավելորդ չի լինի ասել, որ Ալեքսանդր Ե-ն 1410 թվին մահացավ, եւ նրան հաջորդեց Հովհաննես ԻԳ-ն, որն իր աթոռանիստը տեղափոխեց Բոլոնիա քաղաքը: Հենց այդ շրջանում Արեւմուտքում ասպարեզ եկավ նոր աղանդ, որի հիմնադիրը Ջոն Վիքլիֆն էր Անգլիայից: 1374-ին նա սկսեց իր գործունեությունը, իսկ 1403-ին նրան հաջորդեց Ջոն Հուսը: Հերձվածի կողքին Եվրոպայում հանդես եկավ եւ հերետիկոսությունը: Այն վերացնելու համար Կոնստանցի ժողովը հրավիրվեց Շվեդիայում 1414 թ. նոյեմբերի 5-ին: Ժողովը 1415 թ. ապրիլի 6-ին որոշում կայացրեց, թե իր իշխանությունը պապական իշխանությունից բարձր է: Ժողովը շարունակեց իր աշխատանքը մինչեւ 1418 թ.: 1415 թ. մայիսի 29-ին դատապարտվեց Հովհաննես ԻԳ-ն, 1415 թ. հուլիսին Գրիգոր ԺԲ-ն բռնության ներքո հրաժարական տվեց, 1417 թ. հուլիսի 26-ին Բենեդիկտոս ԺԳ-ն կրկին մերժեց հրաժարական տալ, եւ վերջապես 1418 թ. նոյեմբերի 11-ին ժողովը պապ ընտրեց Մարտինոս Ե-ին: Հերձվածն արտաքնապես եւ պաշտոնապես վերացվեց, սակայն խռովահույզ վիճակը շարունակվեց: 1417 թ.՝ 91 տարեկան հասակում, մահացավ Գրիգոր ԺԲ-ն, 1418 թվին մահացավ 1415 թվից բռնադատված Հովհաննես ԻԳ-ն, իսկ Բենեդիկտոս ԺԳ-ն, որպես պապ, ապրեց մինչեւ 1424 թիվը: Նրան հաջորդեց Կղեմես Ը-ն՝ մինչեւ 1429 թիվը, սակայն լքվելով իր յուրայիններից՝ հրաժարական տվեց եւ ենթարկվեց Մարտինոս Ե-ին:



Հաջորդ ժողովն անցկացվեց Իտալիայի Պավիա քաղաքում 1423 թվին, սակայն ժանտախտի պատճառով իր աշխատանքը շարունակեց Իտալիայի Սիենա քաղաքում: Զբաղվելով զուտ հերետիկոսության խնդիրներով՝ ժողովն իր աշխատանքներն ավարտեց 1424 թ. փետրվարի 26-ին:

Մարտինոս Ե պապը հերթական ժողովը հրավիրեց 1431 թվի փետրվարի 1-ին Շվեյցարիայի Բասիլիա կամ Բազել քաղաքում: Փետրվարի 20-ին պապը մահացավ, եւ մարտի 3-ին պապ ընտրվեց Եվգինեոս Դ-ն: Ժողովն իր առաջին նիստը կարողացավ անցկացնել միայն 1431 թ. դեկտեմբերի 14-ին, իսկ մինչ այդ՝ դեկտեմբերի 12-ին, պապը հրաման տվեց ժողովը հետաձգել եւ այն անցկացնել 18 ամիս անց Բոլոնիա քաղաքում: Բազելի ժողովականներն այդ կարգադրությունը չընդունեցին եւ 1432 թ. փետրվարի 15-ին որոշում կայացրին կրկին, որ իրենց վճիռը պապական իշխանությունից բարձր է, եւ պահանջեցին, որ Եվգինեոսն իր հրամանը ետ վերցնի: Իսկ երբ պապը չհամաձայնվեց, 1432 թ. դեկտեմբերի 18-ին նրան 60 օր ժամանակ տրվեց: Պայմանը կրկնվեց 1433 թ. հուլիսի 13-ին եւս՝ սպառնալով պապին պաշտոնանկ անել: Իր հերթին Եվգինեոսը սեպտեմբերի 13-ին հատուկ կոնդակով մերժված համարեց Բազելի ժողովականների որոշումները: Սակայն նրա վիճակը Բոլոնիայում առանձնապես լավ չէր, քանի որ նրան սկսել էին լքել յուրայինները: Նա 1434 թ. ապրիլի 24-ին ստիպված եղավ հաշտվել Բազելի ժողովականների հետ եւ փաստորեն ընդունեց Կոնստանցի որոշման իրավական լինելը, որ հիշյալ ժողովի որոշումները բարձր են պապի վճիռների նկատմամբ: Եվգինեոսին դա դուր չէր գալիս, բայց նա այլ ելք չուներ, ուստի եւ հարկադրված հնազանդվեց: Միաժամանակ նա փորձեց իր ազդեցությունը էապես մեծացնել հույների միջոցով:



15-րդ դարի մինչեւ կեսերն ընկած շրջանը ճակատագրական եղավ Բյուզանդական կայսրության համար: Օսմանյան սուլթան Մեհմեդ Ա-ին հաջորդած Մուրադ Բ-ն շարունակել էր հոր քաղաքականությունը եւ գրեթե ավարտին հասցրել կայսրության ասիական եւ եվրոպական մասերի նվաճումը: Պետության մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը, հայտնվել էր մահացու շրջափակման մեջ եւ գտնվում էր օրհասական վիճակում: 1425-ին կայսր հռչակված Հովհաննես Ը Պալեոլոգ կայսրը շատ ծանր, ըստ էության, նվաստացուցիչ պայմաններով տասնամյա հաշտություն էր կնքել Մուրադ Բ սուլթանի հետ, սակայն հակառակորդի կողմից մշտապես սպասում էր անակնկալների: Օգնության այլ հույս չտեսնելով եւ խորապես գիտակցելով, որ հանուն այդ օգնության՝ նա պարտավոր է գնալ դավանաբանական զիջումների, ինչպես նաեւ հորդորվելով Պոլսի Գալաթիա թաղամասում հաստատված ջենովացիներից, նա 1433-ին ուղղակի օգնության խնդրանքով դիմեց Եվգինեոս պապին: Այդ դիմումը պարզապես երկնային մանանա էր ծանր վիճակում հայտնված պապի համար, ուստի նա հենց նույն տարվա հուլիսին բանակցությունների համար Պոլիս ուղարկեց իր քարտուղար Քրիստափոր Կարաթոնիին: Կայսրն առաջարկում էր Կոստանդնուպոլսում գումարել երկու Եկեղեցիների միությունը հաստատող եկեղեցական ժողով: Պապը հարմար գտավ ընդունել այդ առաջարկը, քանի որ դա, նրա կարծիքով, հնարավորություն կտար ցրելու Բազելի ժողովը: Հարկ է նկատել, որ կայսրը հրավերներ էր ուղարկել նաեւ Բազելի ժողովականներին, սակայն վերջինները գտնում էին, որ ժողովը պետք է գումարել Եվրոպայում կամ ավելի ճիշտ՝ Արեւմտյան Եվրոպայում: Հռոմի պապն իր հերթին առաջարկեց ժողովն անցկացնել իր աթոռանիստ Բոլոնիա քաղաքում, իսկ կայսրը՝ ծովեզրյա Անկոնա քաղաքում: Սակայն բանակցությունները ձգձգվեցին մինչեւ 1436 թիվը, որի ընթացքում Բազելի ժողովը շարունակեց գործել՝ աշխատելով իր կողմը գրավել հույներին: Ժողովականներն առաջարկում էին ժողովն անցկացնել Բազելում, Ավինիոնում կամ Սավոյայում: Կայսրը, որ հայտնվել էր երկու կրակի միջեւ, կարծելով, որ ավելի զորեղ է Հռոմի պապը, հարեց վերջինիս: Դրանից օգտվելով՝ Եվգինեոս պապն էլ իր հերթին սկսեց ավելի համարձակ գործել Բազելի ժողովականների դեմ: Սակայն արդյունքը պապի համար խիստ անսպասելի էր: Ժողովականներն ամբողջությամբ ընդդիմացան Եվգինեոս պապին:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Քրիստոնեության կարեւոր պահերից մեկն այն է, որ Քրիստոսն անձամբ ոչինչ չի գրել: Մեր ունեցած Ավետարանը Եկեղեցու հիշողությունն է, Քրիստոսի ամենամոտ աշակերտների հիշողությունն այն մասին, ինչն ապրել, ինչը սովորել են՝ Նրա հետ իրենց շփումներում: Հիրավի, Քրիստոսն Իր ձեռքով գրած ոչ մի գիրք չի թողել, ինչպես դա արել են շատ ու շատ ուսուցիչներ: Իսկ ի՞նչ է թողել Նա Իրենից հետո: Մենք միանգամայն հաստատապես գիտենք, թե ինչ է ասել Նա, ինչ է սովորեցրել, ինչպիսին է եղել Նրա կերպարը: Այո՛, գիտենք եւ ավելի հավաստի գիտենք, քան եթե Նա թողած լիներ որեւէ գիրք, որը կարդալով՝ դուրս կբերեինք այն, ինչը կուզենայինք տեսնել ճիշտ այնպես, ինչպես մենք մշտապես անում ենք տարբեր գրողների գրքերը կարդալիս. նրանցում մենք մեզ ենք տեսնում, եւ այդ գրքերն էլ ընդունում ենք մեր ընկալումներին համապատասխան: Քրիստոսը գրքեր չի թողել, բայց թողել է կենդանի հանրություն, որ կոչվում է Եկեղեցի եւ որն էլ Նրան անձամբ է ճանաչում:

Ես ասում եմ «ճանաչում» եւ ոչ թե «ճանաչել է», որովհետեւ հարյուրամյակից հարյուրամյակ բոլոր նրանք, որ հավատացյալներ են դարձել, այսպես թե այնպես Քրիստոսին հանդիպելով՝ նրանք եւս կարող են կրկնել Հովհաննես առաքյալի խոսքերը. «Որի մասին լսեցինք, որին ականատես իսկ եղանք, որին նայեցինք, եւ որին մեր ձեռքերը շոշափեցին, ... պատմում ենք ձեզ» (Ա Հովհ. Ա 1-3): Մենք խոսում ենք այն մասին, ինչը մեր փորձառության սահմաններում մեզ համար բացարձակապես անբեկանելի իրողություն է: Սա դարեր շարունակ տեղի է ունենում անթիվ ու անհաշիվ մարդկանց հետ: Եվ պետք է հիշել, որ Եկեղեցին, ինչպես վկայում են կատեխիզիսները, միայն մարդկանց հանրություն չէ՝ միավորված դոգմաներով, հոգեւոր սկզբնավորումներով ու խորհուրդներով: Իհարկե, այս բոլորը կան Եկեղեցում եւ կազմում են նրա հիմնամասը, սակայն Եկեղեցին ունի մի կարեւոր միջուկ եւս: Դա **հանդիպումն** է, Քրիստոսի հետ դեմ առ դեմ հանդիպումը: Այդ հանդիպումը կարող է լինել ցնցող եւ կամ բխել խորքից՝ հազիվ նշմարելի, սակայն միշտ իրականանալի, որպեսզի մարդը կարողանա ասել՝ «Ես հավատացյալ եմ»:

Բայց այստեղ կա մի պահ, որն ինձ թվում է խիստ կարեւոր. դա հավատն է, այսինքն՝ Աստծո հետ հանդիպման անարտահայտելիությունը: Հաղորդել այն, ինչը կատարվում է, անհնարին է. մարդկային լեզվով կարելի է արտահայտել միայն այն, ինչը հասու է լեզվին, մեր ընկալումներին: Ես ձեզ ուզում եմ անկեղծորեն ասել, թեպետ այն կարող է թվալ անտեղի, թե ինձ հետ ինչ է տեղի ունեցել, եւ ապա անցնեմ հարցին, թե ինչպես է հավատը գտնում իր արտահայտությունը:

Ես ծնվել եմ մինչ առաջին համաշխարհային պատերազմը: Իմ կյանքի փորձառությունը սահմանափակվել է Ռուսաստանի ողբերգական տարիներով եւ արտերկիր վտարանդիությամբ:

Իրադրություններն այնպիսին էին, որ ես ոչ մի եկեղեցական, ավելին՝ նույնիսկ քրիստոնեական ոչ մի ուսմունք լսած չկայի: Վտարանդիության մեջ ապրում էի մի փակ դպրոցում, այնտեղից դուրս էի գալիս ընդամենը մի քանի ժամով՝ այն էլ կիրակի օրերին: Այն օրերին ինձ սովորեցնելու մասին խոսք լինել չէր կարող. ինձ պետք է միայն մխիթարեին, ուրախացնեին: Այդ պատճառով էլ Աստծո մասին գաղափար իսկ չունեի: Գիտեի միայն, որ իմ ծնողները հավատում էին Աստծուն եւ ուրիշ ոչինչ: Եվ այդպես բավականին երկար տարիներ: Ես ընդունվեցի ռուսական երիտասարդական մի կազմակերպություն: Այդտեղ էլ հանդիպեցի հայր Գրիգորի Շումկինին, ում մասին ձեզ հետ արդեն խոսել եմ անցյալ զրույցի ժամանակ: Նա իմ առջեւ բացեց ամենահաղթ սիրո խորհուրդը, մի սիրո, որը կարող է ցնծություն պատճառել մարդուն կամ էլ դառնալ խաչ տանող ճանապարհի տառապանք: Բայց ես դա ընկալեցի որպես նրա անձնական, ինձ համար անհասկանալի մի հատկությունը: Հետո անցան տարիներ: Աստծո մասին ես արդեն լսեցի, բայց Նրանով չհետաքրքրվեցի:

Եվ ահա մի անգամ՝ վոլեյբոլ խաղալու ժամանակ, մեզ՝ 14 տարեկան պատանիներիս մոտեցավ մեր ղեկավարն ու ասաց. «Երեխանե՛ր, մենք հրավիրել ենք մի հոգեւորականի՝ ձեզ հետ զրուցելու համար, որովհետեւ մոտենում է Ավագ շաբաթը, անցե՛ք դահլիճ»: Բոլորը հրաժարվեցին, ես նույնպես հրաժարվեցի, բայց առավել կտրուկ: Մյուսներն ինչ-որ չափով տեղյակ էին կրոնական կյանքին, իսկ ես պատկերացում անգամ չունեի, ուստի եւ պատասխանեցի, թե ես ո՛չ Աստծուն եւ ո՛չ էլ հոգեւորականներին չեմ հավատում եւ ոչ մի ցանկություն էլ չունեմ ինչ-որ տեղ գնալու եւ սովորելու այն, ինչն ինձ ամենեւին հարկավոր չէ: Մեր ղեկավարն իմաստուն մարդ էր եւ չասաց, թե դա լավ կլինի իմ հոգու համար: Ես նրան այդ պարագայում կպատասխանեի, թե ես հոգի չունեմ, ուստի հոգեւորականի էլ պետք չունեմ: Նա ինձ ասաց. «Պատկերացրու, թե ինչ կտարածի այդ հոգեւորականը Փարիզով մեկ, եթե ձեզանից ոչ մեկը չգնա հանդիպմանը: Ես քեզ չեմ խնդրում լսել նրա ասածները, այլ գնա, նստիր մի անկյունում եւ մտածիր քո մտորումների շուրջը»: Որոշեցի կազմակերպության հանդեպ կոռեկտությունից ելնելով՝ գնալ: Գնացի նստեցի մի անկյունում եւ փորձեցի ի մի բերել մտքերս: Սակայն, ի դժբախտություն ինձ (գուցե՝ ի երջանկություն), պարզվեց, որ հոգեւորականը շատ բարձր էր խոսում եւ ինձ խանգարում էր մտքերս ժողովելու. այն, ինչի մասին նա խոսում էր, սկսեց ինձ այն աստիճանի վրդովել, որ սկսեցի հետեւել ասածներին: Այդ ժամանակ մեզ պատրաստում էին նրան, որ սուրը ձեռքներիս պիտի վերադառնայինք Ռուսաստան եւ փրկեինք հայրենիքը բոլշեւիզմից, իսկ այդ հոգեւորականը մեզ Քրիստոսից էր մրմնջում. խոսում էր հնազանդության, համբերության, երկյուղածության մասին, այն բոլոր բարեպաշտների մասին, որոնց հետ մենք ոչ մի կապ չունեինք, քանի որ նրանք, ինչպես մեզ էր թվում, ոչ մի օգուտ չէին տալու մեր գործին: Ես լսում էի, ու անընդհատ մոլեգնում էր զայրույթս:



*Շարունակությունը՝ էջ 8*

# ՈՒԽՏԱՆԵՍ

## (920/930 - 986)



Սկիզբը՝ թիվ 3-4

Նույն ջերմեռանդությամբ, ինչպես Ագաթանգեղոսը, Ուխտանեսը նկարագրում է հեթանոսական տաճարների ավերումը Երազամույնքում, Անահիտի մեհյանը՝ Արտաշատում, Բարշամի սպիտակ դիցի մեհյանը՝ Թորդանում («պատկերաքանդակն էլ փշրեցին»), Արամազդի մեհյանը՝ Անիում («պատկերաքանդակն էլ կործանեցին»), Անահիտ դիցուհու ոսկե արձանը փշրեցին Եկեղյաց գավառում. «Եւ յետոյ անցան Գայլ գետը՝ Թիլ ավանում քանդեցին Արամազդի դստեր Յոնիական մեհյանը», իսկ Բագառիճում «աւերեցին Արամազդի որդու Միհրական մեհյանը» (I, ԿԸ, էջ 95):

Ավելի ուշ Գրիգորն իր ձեռքով կործանում է Գիսանե կուռքի տաճարն Իննակյան վայրում եւ «անունը փոխելով՝ կոչում Գլականք՝ իբրեւ սուրբ Կարապետի նշխարների կայան» (I, ՅԴ, էջ 104): Այսինքն՝ Դեմետրե եւ Գիսանե աստվածներին նվիրված մեհյանի տեղում՝ Տարոնում, հիմնադրվում է Գլակի Սբ Կարապետ վանքը:

Կեսարիայի Ղեւոնդ արքեպիսկոպոսը Գրիգորին ձեռնադրում է հայոց հայրապետ: Վերադարձին իջեւանում են Սեբաստիայում, եկեղեցի հիմնադրում, անվանակոչում սուրբ Գրիգորի անունով, «որը [հիմա էլ] դեռեւս կանգուն է քաղաքի եզրին» (I, ԿԹ, էջ 97): Իր հերթին Գրիգորը ձեռնադրում է 400 եպիսկոպոս վերակացու, իսկ երեսունը, ըստ իրենց կարգի, «աթոռակալութեամբ ձեռնադրութիւն ընդունեցին»:

Ուխտանեսի գրքի **Բ հատվածը** վերնագրված է «Հայերից վրացիների բաժանման պատմությունը»:

Շարադրանքը նվիրված է հայոց հայրապետ Աբրահամ Ա Աղբաթանեցու (607-615, Գրիգոր Լուսավորչից հետո քսանվեցերորդը) օրոք հայոց միաբանությունից Կյուրոնի կողմից Վրաց Եկեղեցու բաժանման պատմությանը, քանի որ վրացիները «հաճեցին կցորդակից դառնալ Քաղկեդոնի չար աղանդին՝ փոխելով սուրբ հայրերի օրէնքները եւ մոռանալով աստուածային ուխտը» (II, Ա, էջ 108): Կյուրոնը ձեռնադրվել է հայոց հայրապետ Մովսես Եղիվարդեցու (574-604) կողմից: Մովսես եւ Աբրահամ վեհափառների միջեւ կաթողիկոսական տեղապահ է եղել Վրթանես Քերթողը (604-607):

Կյուրոնն ազգությամբ վրացի էր՝ Ջավախքի Սկուտրի գյուղից, ստացել էր վրացական եւ հայկական կրթություն, 15 տարի ապրել հռոմեացիների Կողոնիս գավառի Նիկոպոլիս քաղաքում եւ, սովորելով նրանց «չարարվեստ գիտությունը», Հայոց Եկեղեցուց բաժանվեց: Վերադարձին բնակվում է Մովսես վեհափառի մոտ՝ Դվին քաղաքում: Մովսեսը նրան դարձնում է Սուրբ Կաթուղիկեի վանեց, ձեռնադրում քորեպիսկոպոս՝ նրան տալով Այրարատ գավառի թեմը: Այդ ժամանակ վախճանվում է վրաց կաթողիկոսը. վրաց աշխարհիկ եւ հոգեւոր վերնախավի խնդրանքով Մովսեսը հարմար է գտնում Վրաց Եկեղեցու առաջնորդ կարգել Կյուրոնին: Հայոց հայրապետը մտածեց «իր տնից տալ նրանց առաջնորդ՝ երկու կողմերի հաւատը միաբան ու հաւատարիմ [պահպանելու] համար» (II, Ա, էջ 109): Ահա այս «յուրային» թվացողն էլ բռնում է դավաճանության ուղին:

Այս ամբողջ պատմությունն Ուխտանեսը շարադրում է բազմաթիվ փաստաթղթերի հրապարակությամբ: Դրանք նամակներ են, որոնք իրար են հասցեագրում հայոց հայրապետ Մովսեսը եւ վրաց կաթողիկոս Կյուրոնը, Ցուրտավի եպիսկոպոս Մովսեսը եւ հայոց կաթողիկոսական տեղապահ, վարդապետ Վրթանես Քերթողը, հայոց հայրապետ Աբրահամ Ա-ն՝ տարբեր անձանց: Նամակների բնագրերն Ուխտանեսը քաղել է «Գիրք թղթոց»-ից, իսկ ինչ այնտեղ չի գտել, դժվարությամբ հայթայթել է այլ աղբյուրներից՝ Կիրակոս քահանայից (II, գլ. Դ), բանավոր զրույցներից եւ այլն: Օրինակ՝ Վրաց Եկեղեցու բաժանման երկրորդ պատճառի մասին գրում է. «... կը կամենայի պատմել եւ մի այլ պատճառի [մասին], որ մենք լսել ենք շատերից բազում անգամ, չնայած գրաւոր որեւէ գրքում չենք գտել: Թէեւ սա նաեւ դատարկաբան զրոյցներից չէ, այլ ծերերի աւանդութիւնից եւ ընթերցասէր վստահելի մարդկանցից է ասուած, որ կը կամենայի շարադրել այս պատմութեան գլուխների հերթականութեան մէջ» (II, Թ, էջ 123):

Այլ առիթներով անպայման շեշտում է աչքի տեսածը՝ տարբերակելու համար գրավոր խոսքից: Օրինակ՝ «մեր բարեպաշտ Տրդատ թագաւորի պատուաւոր զգեստը, որ նա տուել էր Տիրոջ տանը իբրեւ սրբութեան սպասք, որը մենք տեսել ենք մեր աչքերով» (II, ԼԸ, էջ 156):

Այս գլխում օգտագործվել են նաեւ շրջաբերականներ:

Ցուրտավը, ըստ Ուխտանեսի, ընդարձակ ու մեծ մայրաքաղաք էր՝ իր «հայալեզու աշխարհով», որ հետո վերանվանվեց Գաչենք եւ կորցրեց իր փայլը: Ցուրտավը եղել է Գուգարաց մեծ բդեշխի նստավայրը, նաեւ՝ սբ Շուշանիկի նշխարների հանգստարանը:

Տեր Մովսեսը գրում է. «Արդ՝ գիտենք, որ անգիտութեամբ ես արել այդ: Այժմ դարձի՛ր եւ զղջա՛ ապաշխարութեամբ հանդերձ, եւ արցունքներով ասա՛ դու մարգարեի խօսքը. «Տէ՛ր, մի՛ հիշիր իմ մանկութեան եւ անգիտութեան մեղքերը»: <...> Մի՛ քանդիր հաւատի պարիսպը, որ սուրբ հայրերը հաստատեցին հաւատի վէմերով: Արդ՝ մի՛ եղիր քո եւ քո ժողովրդի կորստեան պատճառ...» (II, Բ, 112-114):

Կյուրոնն իր առաջին պատասխան նամակների մեջ հավատարմության երդումներ է տալիս: Ընթացքում Ուխտանեսն իր դավանաբանական վեճն է մղում «Քաղկեդոնի քացախոտ չարութեան» դեմ, որ Կյուրոնին էր հասել «հրէական խմորագնդից» (II, Է, էջ 121), քննադատում նրանց դարձը «դէպի իրենց չար տիղմը»:

Ուխտանեսը շատ դրական է ներկայացնում Ցուրտավի Մովսես եպիսկոպոսին եւ նրա գործունեությունը, որը, հավատափոխ չլինելու պատճառով, հալածվել է Կյուրոնի կողմից: Իսկ Ցուրտավի եկեղեցին կոչված էր երկու երկրների միջեւ հաստատելու հոգեւոր խաղաղություն: Պատմության շրջանակը լայնացնելով՝ խոսում է Վրկանի մարզպան Սմբատի մասին, որը «մեր ազգից էր, տոհմով Բագրատունի» (II, ԼԱ, էջ 148): Սմբատն իր հերթին նամակներ է հասցեագրում Կյուրոնին:

Վանէրեցների շարքում՝ մի տեղ, Ուխտանեսը հիշում է Երեւանը՝ իր Դավիթ երեցով:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Անիի Մայր տաճարը



Քաղաքամայր Անին արտաքին հարձակումներից շրջափակված էր ամուր պարիսպներով, իսկ ներսում եռում էր կյանքը, ծաղկում մշակույթը, գործում էին արվեստանոցներ, մեկը մյուսի ետեւից կառուցվում շինություններ: Գնալով հզորանում էր Բագրատունյաց թագավորությունը, եւ հայոց աշխարհը լցվում էր բարիքով: Սմբատ արքան (977-990 թթ.), ով ուներ բազում վաստակներ, որոշեց Աստծու փառքի մի տաճար կանգնեցնել, այնպիսի մի տաճար, որ հավերժ մնա, եւ որպիսին աշխարհը տեսած չլինի: Կանչեց նա իր մոտ «Անվո ճարտարապետին»՝ Տրդատին եւ հայտնեց իր ցանկությունը: Թվաց, թե ճարտարապետն էլ վաղուց խորհել էր այդ մասին, տենչացել կառուցումը Անին խորհրդանշող հրաշաշեն մի տաճարի, եւ ուրախությունը պատեց նրա հոգին: Խաչիկ Ա կաթողիկոսի օրհնությամբ, Սմբատ տիեզերակալ արքայի պատվերով, Տրդատ ճարտարապետի ստեղծարար մտքով սկսվեցին Կաթողիկե եկեղեցու կառուցման աշխատանքները: Սակայն արքան այդպես էլ չտեսավ իր բաղձանքն իրականացված, քանզի վաղաժամ մահացավ: Մի պահ կանգ առավ տաճարի շինարարությունը, ու ճարտարապետն էլ տխրեց. տեսնես նոր արքան ինչպե՞ս կվարվի:

Հայոց գահին բազմած Գագիկը (990-1020 թթ.) ոչ միայն ետ չմնաց իր եղբայր Սմբատից, այլեւ ամրացրեց երկրի սահմաններն այնպես, որ ոչ մի նենգավոր չէր համարձակվում մոտենալ հայոց սարերին, զարգացրեց տնտեսությունը, թեթեւացրեց հարկերը եւ մշակութային մեծ ու լայն գործունեություն ծավալեց, որի մաս կազմեց եկեղեցաշինությունը: Իսկ նրա կինը՝ հայոց Կատրանիդե բարեպաշտ թագուհին, ձեռնարկեց եւ 1001 թ., ի փառս Բարձրյալ Աստծու եւ ի բարօրություն հայրենի երկրի, ավարտին հասցրեց տաճարի շինությունը, որն էլ օծվեց մեծաշնորհ հովվապետ Սարգիս Ա Սեւանցու (992-1019 թթ.) կողմից: Այս մասին վիմագիր արձանագրությունն ասում է. «Ի ՆԾ (1001) թուին հայոց, ՄԺԹ թուին հոռոմոց, ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա հայոց եւ վրաց Շահանշահի, ես՝ Կատրանիդէ հայոց թագուհի, դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի, յողորմութիւնն Աստուծոյ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմո Գագկա Շահանշահի շինեցի զՍուրբ Կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա եւ կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ եւ կենդանի, ծնունդ հոգեւոր եւ արձան մշտնջենաւոր...» (Դիվան հայ վիմագրության, Ա, Եր., 1966, կազմ. Հ. Օրբելի, արձ. 101):

Անիի Կաթողիկե Սբ Աստվածածին եկեղեցին ունի բազիլիկ, քառամույթ գմբեթավոր հորինվածք (24.7x34.3 մ). այն վերարտադրում է դեռեւս 7-րդ դարում Հայաստանում ստեղծված գմբեթավոր բազիլիկների տիպը, սակայն ավելի զարգացած ու կերպափոխված: Ճարտարապետն այստեղ մի կարեւոր ավանդ ներմուծեց. գմբեթակիր նավը գերիշխում է՝ շնորհիվ կողմնային նավերի զգալի նեղացման, նաեւ փնջաձեւ հորինվածք տվեց սյուներին: Նորաոճ կառուցվածքով այս սյուները կրում են բարձրաբերձ կամարներն ու թաղերը, կրում այնքան թեթեւ, որ կարծես ճախրում են նրանք ներքին տարածության վրա, իսկ երկնասլաց գմբեթը, թվում է, իրար է կապում երկինքն ու երկիրը: Խորանը հիացնում է իր վսեմությամբ: Արտաքին ճակատները հարդարված են նրբագեղ կամարաշարով, շքամուտքերն ու պատուհանների շրջանակները՝ գեղեցիկ հյուսվածքներով, իսկ ներքին պատերը՝ որմնանկարներով, որոնցից հատկապես ազդեցիկ է արեւելյան պատի՝ գահին բազմած մարդեղացած Աստծու ահեղ պատկերը (տե՛ս Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երեւան, 1964, էջ 58-59: Քրիստոնյա Հայաստան հնրգ., 2002, Անիի Մայր տաճար, Հասրաթյան Մ.):

Ճարտարապետն իր գործն արել էր, թագուհին էլ իր հերթին «զարդարեց» եկեղեցին «ծիրանեծաղիկ զարդերով, ոսկեթել նկարագործ հյուսվածքներով, արծաթեղեն եւ ոսկեղեն անոթներով եւ բազմապայծառ լուսատու կանթեղներով՝ երկնային վայելչության պես» (Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն, 1885, էջ 256):

1010-ական թթ. կաթողիկոսանիստ այս տաճարի կողքին Սարգիս Ա հայրապետը կառուցում է Սբ Հռիփսիմյանց անվամբ վկայարանը եւ մեծ շուքով Վաղարշապատից այդտեղ փոխադրում սուրբ կույսերի նշխարների մի մասը:

1064-ին, երբ սելջուկները գրավում են Անին, տաճարը վերածվում է մզկիթի, իսկ 1124-ին գմբեթին խոշոր մահիկ է կանգնեցվում: Սրանից զայրացած անեցիները քաղաքի դարպասները բացում են Վրաց Դավիթ Շինարար թագավորի եւ հայ-վրացական միացյալ զորքի առջեւ: Ազատագրված քաղաքի Մայր տաճարը վերստին օծվում է եւ գործում: 12-րդ դարում տաճարի սպասավորներն են եղել Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, պատմիչ Սամուել Անեցին, պատմիչ եւ թարգմանիչ Մխիթար Անեցին (տե՛ս Մաթեւոսյան Կ., Անի, Էջ., 1997: Քրիստոնյա Հայաստան հնրգ., 2002, Անիի Մայր տաճար, Հասրաթյան Մ.):

13-րդ դարում՝ Անին Զաքարյան իշխանների կողմից ազատագրվելուց հետո, Կաթողիկեն բարեկարգվում եւ բազմաթիվ նվիրատվություններ է ստանում: Հատկանշական են 1213-ին Տիգրան Հոնենցի մատուցած ծառայությունները, որոնց մասին նա անմահ հիշատակ է թողնում եկեղեցու հարավային պատին. նա շինում է աստիճանները, «զոր ի բազում ամաց հետէ խարխալեալ էր», նվիրում կուղպակ, ձեռագրեր ու զարդեր (տե՛ս Դիվան, Ա, արձ. 100):

Անիի սիրտն էր Կաթողիկեն, ամենքի հիացմունքը: 1319-ի երկրաշարժից վնասվում է նրա գմբեթը, ապա՝ էլ ավելի քանդվում բարբարոսների դաժան ձեռքով:

Հայոց ազգի երբեմնի պարծանքը, այսօր կիսավեր ու գերի, բայց կանգուն է ի տես ամբողջ աշխարհի՝ որպես ծնունդ հոգեւոր եւ արձան մշտնջենավոր...

***Լուսինե ԹՈՒՄԱՆՅԱՆ***

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ ՎԱՀԿԱՎՃԻ

## (1430-1439)

*Սկիզբը՝ էջ 3*



Ի վերջո պապն ու կայսրը համաձայնեցին եկեղեցական ժողովը գումարել Իտալիայի Ֆեռարա քաղաքում, որի վրա հենվելով՝ Եվգինեոսը 1438 թ. հունվարի 1-ին հատուկ կոնդակով լուծարեց Բազելի ժողովը. նույն թվականի փետրվարի 8-ին հրավիրվեց միարարար ժողովը: Փետրվարի 27-ին Ֆեռարա եկավ ու մարտի 4-ին ընդունեց Բյուզանդիայի Հովհաննես կայսրին, իսկ 7-ին Կոստանդնուպոլսի Հովսեփ պատրիարքին եւ նրան ուղեկցող հոգեւորականներին: Ինչ-ինչ բանակցություններից հետո՝ ապրիլի 9-ին, ժողովը հանդիսավորապես բացվեց, սակայն ժողովի աշխատանքները մինչեւ հոկտեմբերի 8-ը հետաձգվեցին՝ լատին հոգեւորականներից շատերի չժամանելու պատճառով: Պապին թվում էր, թե կատարյալ հաղթանակ է տարել, սակայն Բազելի ժողովականներն ապօրինի հռչակեցին Ֆեռարայի ժողովը եւ մեջտեղ բերին Բրյուգեի կանոնները կամ Գաղղիական Եկեղեցու կանոնադրությունը, որն առավել քան նպաստավոր չէր պապի իշխանության համար: 1439 թվի հունիսի 25-ին նրանք պապին գահընկեց հռչակեցին, իսկ նոյեմբերի 5-ին նոր պապ ընտրեցին Ամեդեոս Ը Սավոյայի հրաժարյալ իշխանին՝ Ֆելիքս Ե անունով: 1433 թ. մայիսի 16-ին Բազելի ժողովը, որ 12 տարի էր տեւել, փակվեց:

Հույներին հասկանալ կարելի էր: Նրանք օսմանյան վտանգից ազատվելու համար պատրաստ էին դավանաբանական ցանկացած զիջման, սակայն զարմանալի է, երբ հռոմեադավանները կամենում էին այս ամենը տարածել նաեւ Հայոց եկեղեցու վրա: Անշուշտ, Ֆեռարայի ժողովը, որ 1438 թ. հոկտեմբերի 8-ից մինչեւ 1439 թվի հունվարի 10-ը 16 նիստ գումարեց, Հայոց եկեղեցու խնդիրներին չի անդրադարձել եւ չէր էլ կարող անդրադառնալ: Այս ընթացքում քաղաքում ժանտախտ բռնկվեց, եւ ժողովականներն ստիպված եղան տեղափոխվել Ֆլորենցիա քաղաքը, որտեղ փետրվարի 26-ին գումարեցին առաջին նիստը: Մինչեւ հունիսի 8-ը քննարկում էին «Հոգւոյն Սրբոյ» եւ «յՈրդւոյ բղխման» խնդիրը եւ միջասահման բանաձեւով այն փակեցին: Փոխադարձ զիջումներ եղան մյուս խնդիրներում, սակայն պապական իշխանության կետը բուռն դիմադրություն առաջ բերեց: Հույները պատրաստ էին Հռոմը ճանաչել որպես առաջին աթոռ, մինչդեռ լատինները հանդես եկան ընդարձակ նախաձեռնություններով, ինչպիսիք էին հանգանակին հավելումներ կատարելը, ինքնուրույն տիեզերական ժողովներ գումարելը, պատրիարքներին ատյան բերելն ու դատելը եւ այլն: Հունիսի 12-ին մահացավ Հովսեփ պատրիարքը, եւ հույն եպիսկոպոսները պատրաստվեցին լքելու Ֆլորենցիան: Սակայն դեռ խնդիրներ ունեին լուծելու Եվգինեոս պապը եւ Հովհաննես կայսրը: Եթե վերջինս դեռ հույսեր էր փայփայում ստանալու լատինների օգնությունը, ապա պապը, որին հունիսի 25-ին գահընկեց էր արել Բազելի ժողովը, չէր կամենում տեղի տալ Բազելի ժողովի որոշմանը: Բոլորովին տարբեր պատճառներով պապը եւ կայսրը իրար դաշնակցեցին եւ միարարական վճիռ կայացրին, որը հուլիսի 5-ին եւ 6-ին հանդիսավորապես ստորագրել տվեցին Ֆլորենցիայի մայր եկեղեցում:

Վճռում ասվում էր. Հռոմի պապն իր կոնդակը հաստատում է կայսեր հավանությամբ, եւ արեւելյան պատրիարքներին երկար-բարակ բացատրվում էր, թե լատինների «ի Հօրէ եւ յՈրդւոյ» եւ հույների «ի Հօրէ Որդւով» բանաձեւերը նույն իմաստն ունեն, եւ ընդունվում է «իբր ի միոյ սկզբանէ» վարդապետությունը: Պատարագի եւ մաքրարանի մասում երկու Եկեղեցիները շարժվեցին իրենց սովորության համաձայն: Պապական իշխանության հարցում հարգվում էին հույների պահանջները, մասնավորապես պահպանվելու էին պատրիարքների բոլոր իրավունքները: Եթե հույներին թվում էր, թե լատինական թելադրանքից այլեւս ազատված են, ապա լատինները կարծում էին, որ առավելություն են ձեռք բերել հույների նկատմամբ: Եվգինեոսին թվում էր, թե հաղթել է Բազելի ժողովականներին, իսկ Հովհաննես կայսրին՝ թե ապահոված է Բյուզանդական կայսրությունը: Հուլիսի 6-ին կայսրն օգնություն պահանջեց, սակայն Եվգինեոսը նրան ոչնչով օգնել չէր կարող, քանի որ այլեւս ազդեցություն չուներ եվրոպական երկրների միապետների վրա, որպեսզի նրանց ստիպեր բանակներ դուրս բերել Օսմանյան կայսրության դեմ: Կայսրը դեռ բավական երկար մնաց Ֆլորենցիայում, սակայն լրիվ հուսախաբ՝ իր ձգտումների մեջ: Օգոստոսի 26-ին հույն հոգեւորականների հետ մեկնեց Կոստանդնուպոլիս, ուր հասավ 1440 թվի փետրվարի 1-ին: Այնուամենայնիվ երկու հույն եպիսկոպոս, որոնք սրտով հռոմեադավան էին, մնացին Իտալիայում՝ արժանանալով կարդինալական ձեռնադրության:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Սկիզբը՝ էջ 2*

Կանոնավոր զորքերի կողմից բացահայտ ցեղասպան գործունեության առաջին արտացոլումը եղավ 1915 թ. հունիսի 2-ին, երբ թուրքերը հայկական թաղամասում սպանեցին շուրջ 400 հայ: Եվ սա դեռ մինչեւ գաղթի հրամանն էր: Այս պայմաններում ինչպե՞ս կարելի է խոսել չծրագրված կոտորածների կամ գաղթի ճանապարհին «թուրքերի կամքից անկախ» մարդկանց սպանությունների կամ գաղթի դժվարություններից հարուցված մահացության դեպքերի մասին:

Մինչեւ գաղթի հրամանը քաղաքի հայության շուրջ 1/4 մասն արդեն ոչնչացվել էր:

Շուտով ստացվում է նաեւ գաղթի հրամանը, սակայն հայությունը չի ենթարկվում հրամանին եւ դիմում է ինքնապաշտպանության: Նրանք ամրացնում են իրենց թաղամասը, կառուցում պատնեշներ: Ինքնապաշտպանությանը կազմակերպված ընթացք տալու համար շապինգարահիսարցիները ստեղծել են զինվորական խորհուրդ՝ Ղուկաս Աղբարի (Դեովլեթյան) գլխավորությամբ:

Հունիսի սկզբներին ծավալվում են կատաղի մարտեր, եւ հայերը հերոսաբար պաշտպանում են իրենց թաղամասը: Սակայն շուտով թուրքերը գործի են դնում հրետանին, որի հետեւանքով բռնկվում են նաեւ հրդեհներ թաղամասի տարբեր մասերում: Արդյունքում այրվում է տների մեծ մասը, եւ հայերը (ավելի քան 5 000 մարդ) ստիպված հեռանում են իրենց թաղամասից ու ապաստանում քաղաքի հինավուրց բերդում: Այստեղ ինքնապաշտպանական ուժերը բաժանվում են 5-25 հոգանոց խմբերի, որոնց առջեւ խնդիր էր դրված նախեւառաջ պահել բերդի պարիսպը: Պարենը եւ զենքը խիստ սակավաթիվ էին: Սակավաթիվ էին նաեւ կռվողները՝ շուրջ 500 հոգի:

Թուրքերը, երբ ստանում են համալրում Սեբաստիայից, անցնում են սպանիչ պաշարման: Հրետանիով եւ նոր զորամասերով համալրված բանակը կազմ ու պատրաստ սպասում էր հարձակման հրամանին: Սեբաստիայի վալին նոր պայմաններում 2 անգամ հանձնվելու առաջարկ է ուղղում հայ պաշտպաններին, սակայն հայերը չեն խաբվում վալիի «ներում շնորհելու» մասին խոստումը եւ մերժում են առաջարկը:

Դրանից հետո 20 000-անոց թուրքական ուժերն անցնում են հարձակման: 70 հոգանոց թուրքական մի ջոկատ կարողացել է հասնել բերդին, բայց հայերը ոչնչացրել են նրանց: Սակայն սա հայերի վերջին հաջողությունն էր, քանզի շուտով իրեն զգացրեց պարենի, զենքի եւ հատկապես ջրի պակասը, ուստի հայերին մնում էր որոշել՝ մահանալ բերդում սովից եւ ծարավից, թուլացած ընկնել թուրք ջարդարարների սրից ու գնդակից կամ դուրս գալ բերդից, կռվել պաշարողների հետ՝ փորձելով այդ կերպ փրկություն պարգեւել իրենց մի մասին, իսկ հակառակ դեպքում՝ զենքը ձեռքին ընդունել պատվավոր մահ:

Հայ մարտիկներն ընտրեցին պայքարի տարբերակը: 1915 թ. հունիսի 25-ի գիշերը հայ մարտիկները (մոտ 1 000 հոգի) դուրս եկան բերդից եւ ծանր կռիվներով ու մեծ զոհերի գնով ճեղքեցին պաշարման օղակը: Նրանք փորձեցին կապ հաստատել հարեւան շրջանների հետ՝ օգնության ակնկալիքով: Սակայն նրանք չգիտեին, որ համատեղ պայքարն անհնարին էր, քանզի հարեւան շրջանները գտնվում էին նույնպիսի սոսկալի պայմաններում:

Օգնություն չստանալով հարակից շրջաններից՝ նրանք շարունակեցին պայքարը տարբեր վայրերում, եւ մի մասին հաջողվեց փրկվել: Նրանց եւ գյուղական բնակչության մի հատվածը հետագայում Սեւ ծովով անցավ Անդրկովկաս եւ փրկվեց թուրքական յաթաղանից:



Իսկ բերդում մնացածները, որոնք հիմնականում ծերեր, կանայք եւ երեխաներ էին, դատապարտված էին կոտորվելու: Սակայն թուրքերն այդժամ զերծ էին մնում վճռական գործողություններից եւ չէին համարձակվում ձեռնարկել նոր գրոհ:

Միեւնույն ժամանակ ինքնապաշտպանական մարտեր էին ծավալվել նաեւ Շապին-Գարահիսարի գավառի գյուղերում, մասնավորապես՝ Բուրգ գյուղում, որտեղ թուրքերը, օգտագործելով իրենց գերակշիռ ուժերը, կարողացան կոտրել հայերի դիմադրությունը եւ սրի քաշել բոլոր բնակիչներին:

Իսկ Շապին-Գարահիսարի բերդում գտնվող 3 000-ից ավելի մարդկանց վիճակն օրհասական էր: Նրանք դատապարտված էին ոչնչացման, ուստի առավել վճռական մարդիկ թույն խմեցին, որ մահը չընդունեն ջարդարարների վայրագ ձեռքերից:

Թշնամու վճռական գրոհը հունիսի 29-ին էր: Թուրքերը ներխուժեցին բերդ եւ դաժան հաշվեհարդար տեսան կենդանի մնացածների հետ, որոնց ճնշող մեծամասնությունը ծերեր, երեխաներ ու կանայք էին:

***Շապին-Գարահիսարի 27-օրյա պաշտպանությունն արեւմտահայոց ինքնապաշտպանական մարտերի ամենահերոսական դրվագներից է: Տեղի հայությունը, անկախ սեռատարիքային պատկանելության, դիմեց հերոսական պաշտպանության եւ հերոսական պայքարով գրեց հայոց պատմության ամենապանծալի էջերից մեկը: Զենքը ձեռքներին պատվով մահ ընդունած հայ մարտիկների սխրանքը դարեր շարունակ օրինակ կծառայի մեզ եւ մեր սերունդներին:***

գ) **Շատախի ինքնապաշտպանություն.** Շատախը Արեւմտյան Հայաստանի Վանի նահանգի գավառներից էր: Կենտրոնը Թաղ (Շատխութաղ) ավանն էր: Մինչեւ 19-րդ դ. կեսը Շատախը եղել է կիսանկախ հայկական իշխանություն՝ իր մելիքով:

Ցեղասպանության նախօրյակին Շատախում մինչեւ 10 000 հայ էր ապրում, ինչը գավառի բնակչության մեծ մասն էր կազմում:

1915 թ. Վանի կուսակալն իր առաջին հարվածը Վանի վիլայեթում ուղղեց հենց Շատախի վրա: Նա լավ զինված զորք ուղարկեց Թաղ, ուր շուրջ 1 400 հայ էր ապրում: Սկսվեցին ձերբակալություններ եւ սպանություններ: 1915 թ. ապրիլի 3-ին Շատախի Հիրճ գյուղում քնած վիճակում սպանվեց օսմանյան խորհրդարանի անդամ Իշխանը (Նիկոլ Պողոսյան), որը Շատախ էր գնացել հենց Վանի կուսակալի խնդրանքով՝ գավառի բնակչությանը հանդարտեցնելու համար:

Այս փաստն զգաստացրեց շատախցիներին, եւ նրանք դիմեցին ինքնապաշտպանության՝ կազմելով զինվորական մարմին: Հայերը կենտրոնացան Թաղ ավանի Վերին եւ Ներքին թաղամասերում, իսկ թուրքերը տեղավորվեցին Ջրաղացի թաղում:

Մարտերն սկսվեցին ապրիլի 4-ին եւ շարունակվեցին մինչեւ մայիսի 12-ը: Հայերը կռվում էին մեծ անձնազոհությամբ: Նրանք ամուր կերպով պաշտպանական դիրքեր էին բռնել իրենց վերահսկողության տակ գտնվող երկու թաղամասերի բոլոր կողմերում, եւ թշնամին, որը տիրել էր շրջակա գյուղերի մեծ մասին, չէր կարողանում տիրել ավանին:

*1915 թ. մայիսի 12-ին Թաղ մտան ռուսական զորքերը եւ Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորած հայ կամավորները: Այսպիսով, Շատախի հայությունը հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ կարողացավ փրկվել թուրքական յաթաղանից: Նահանջող ռուսական բանակին հետեւելով՝ նրանք հուլիս ամսին գաղթեցին Արեւելյան Հայաստան:*

***Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ***

Կից սենյակում

# ՔՈ ՀԱՐԵՎԱՆԻ ԴԵՄ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԻ՛ ՏՈՒՐ...

## Պատվիրան իններորդ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

*«Մարդու մեջ չար բիծ է սուտը»*

*(Սիրաք Ի 26)*

**- Եկեղեցու սուրբ հայրերը սուտ վկայությունը մեծ մեղք եւ բազմաթիվ չարիքների պատճառ են համարում՝ ասելով, որ ստի աղբյուրը հենց ինքը չարն է, եւ առաջին սուտ վկայությունը տրվել է նրա կողմից: Տե՛ր հայր, ինչպե՞ս դա տեղի ունեցավ:**

- Ծննդոց գիրքը պատմում է, թե ինչպես սատանան դրախտում մոտեցավ առաջին կնոջը՝ Եվային, ստեց՝ ասելով. «Ինչո՞ւ Աստված ասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող ուտել» (Ծննդ. Գ 1): Եվան ուղղում է նրա սուտը՝ ասելով, որ միայն չարի եւ բարու գիտության ծառից չեն կարող ուտել, այլապես կմեռնեն: Չարը շարունակում է ստել՝ ասելով. «Չեք մահանա, ...կլինեք աստվածների նման» (Գ 4-5): Մարդու համար խիստ փափագելի էր աստվածանման լինելը: Ուստի Եվան խախտեց Աստծո պատվիրանը, չհավատալով աստվածային ճշմարտությանը՝ ճաշակեց արգելված պտուղը եւ ոչ միայն Աստված չդարձավ, այլեւ զրկվեց դրախտային, երանական կյանքից, ժառանգեց փուշ ու տատասկ աճեցնող երկիրը.... Ուրեմն՝ առաջին մարդիկ, ականջալուր լինելով ստին, զրկվեցին դրախտային երանական կյանքից՝ ժառանգելով այս ժամանակավոր կյանքը: Մեղքն ու մահը ստով մտան աշխարհ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն էլ ասաց, որ ստի հայրը սատանան է (տե՛ս Հովհ. Ը 44): Տեսնում ենք, թե որքան վտանգավոր է ստախոսությունը. ստի պատճառով կործանվեց ողջ մարդկությունը: Եվ թեեւ ճաշակելով արգելված պտուղը՝ Ադամն ու Եվան չմեռան մարմնով, սակայն նույն պահին մեռան հոգով, քանի որ Աստծո պատվիրաններին հակառակվելը հոգու մահն է, սակայն մարմնով մեռան բազում տարիներ անց:

**- Փաստորեն՝ յուրաքանչյուր մարդ, մեղքի մեջ անզղջում մնալով, նույն հոգեւոր մահվան վիճակում է գտնվում, այո՞:**

- Անշուշտ, յուրաքանչյուրս էլ ամեն օր գործում ենք նույն սխալն ու մեղքը: Սատանան մարդկային հոգու կողոպտիչն է, որ կողոպտում է հոգիներն ամեն տեսակ առաքինություններից: Մենք էլ այսօր ունենք ճշմարտության խոսքը, աստվածային սուրբ



պատվիրանը՝ հավատալ, խոնարհվել Քրիստոսի առջեւ, խոստովանել Նրան Տեր եւ Փրկիչ, մկրտվել, հաղորդվել Քրիստոսի Մարմնի եւ Արյան խորհրդին, ողջ կյանքն ապրել աստվածսիրությամբ: Ի հակադրություն աստվածային սուրբ պատվիրանի՝ առկա է աշխարհային կեղծ իմաստությունը՝ սին ու պատրող, որը մերժում է Աստծո գոյությունը, հորդորում վայելել աշխարհը, հագեցում տալ կրքերին, գործել ամեն տեսակ պղծություն ու անօրինություն, որը, ի վերջո, կորստյան է մատնում մարդուն: Երանի՛ այն մարդուն, ով ընտրեց աստվածպաշտության փրկարար ճանապարհը՝ մերժելով սատանայական սուտը: Ահեղ դատաստանի ժամանակ կպարզվի, թե ով է Աստծուն իր ողջ հոգով, սրտով ու էությամբ պաշտել, պայքարել մեղքի դեմ՝ գնալով Ճշմարտության՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետեւից: «Ես եմ ...Ճշմարտությունը»,- ասում է Տերը Հովհաննու Ավետարանում (Հովհ. ԺԴ 6):

**- Ստախոսությունը ճշմարտության հակառակ մոլությունն է, իսկ Ճշմարտությունը Ինքն Աստված է, ինչպես ասացիք: Կարո՞ղ ենք ասել, որ յուրաքանչյուր ստախոս արդեն ինքնին մերժում է Աստծուն:**

- Միանշանակ, քանի որ Ճշմարտությունն Աստված է, իսկ սուտը ճշմարտության մերժումն է: Յուրաքանչյուր հավատացյալ մարդ պիտի ձգտի ճշմարտության կյանքով ապրել: Սակայն շեշտեմ մեկ կարեւոր հանգամանք. չստել չի նշանակում տեղի-անտեղի ճշմարտությունը հայտարարել: Աստվածային ճշմարտություններն ամենուր պետք է հայտարարել, զօր ու գիշեր վկայել, որոշ դեպքերում էլ զգուշանալ՝ ճշմարտությամբ ուրիշին չվնասելու համար: Աստվածաշնչում ասվում է, որ երբ Սամուել մարգարեն պետք է գնար Դավթին թագավոր օծելու, վախենում էր Սավուղից, որովհետեւ վերջինս կսպաներ Դավթին: Եվ Աստված ասում է Սամուելին, որ ասի, թե եկել է զոհ մատուցելու (տե՛ս Ա թագ. ԺԶ 1-4): Անշուշտ, սա սուտ չէր, քանի որ զոհ մատուցելն այցի նպատակներից մեկն էր: Եվ երբ Սամուելը գնաց Բեթղեհեմ՝ Հեսսեի տուն, ամենքը զարմացան: Եվ մարգարեն ոչ միայն զոհ մատուցեց, այլեւ Դավթին թագավոր օծեց:

Որոշ պարագաներում ճշմարտությունը չասելը հերոսություն է դիտվում, օրինակ՝ մարտի դաշտում, երբ գերեվարված զինվորը թշնամուն չի ասում ճշմարտությունը, իր զինակիցների թաքնվելու վայրը եւ այլն: Ստելը մեղք եւ մեծագույն չարիք է, սակայն չստել չի նշանակում անպայման ճշմարտությունն ասել:

**- Տե՛ր հայր, այս պատվիրանը խախտում են նաեւ այն մարդիկ, որոնք բարկության, նախանձի եւ չկամության պատճառով կամ անմեղ մարդկանց անունն ու պատիվն արատավորելու համար թշնամաբար կեղծ լուրեր են տարածում, բամբասում, հրապարակում մարդկանց արատներն ու մեղքերը՝ մոռանալով, որ պետք է խորհեն սեփական մեղքերի ու արատների մասին: Որքանո՞վ է վտանգավոր այս երեւույթը:**

- Իններորդ պատվիրանը հենց այս երեւույթին է վերաբերում: Մարդիկ, տարբեր դրդապատճառներից ելնելով, հաճախ սուտ վկայություն են տալիս:

*Շարունակությունը՝ էջ 8*

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

*Սկիզբը՝ էջ 2*

Արդարեւ, կենդանի Աստծո տաճար եք դուք, ինչպես ասաց Աստված. «Պիտի բնակվեմ նրանց մեջ եւ պիտի ընթանամ նրանց միջով եւ նրանց Աստվածը պիտի լինեմ, եւ նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը: Դրա համար դուրս եկեք նրանց միջից եւ հեռու մնացեք,- ասում է Տերը,- եւ մի դիպեք պիղծ բաներին. եւ Ես պիտի ընդունեմ ձեզ. եւ Ես պիտի լինեմ ձեզ համար Հայր. եւ դուք պիտի լինեք Ինձ համար որդիներ եւ դուստրեր»,- ասում է ամենակալ Տերը» (Բ Կորնթ. Զ 14-18): «Սիրելինե՛ր, եւ որովհետեւ այս խոստումն ունենք, մաքրենք մենք մեզ մարմնի եւ հոգու ամեն պղծություններից, կատարյալ դարձնենք սրբությունը Աստծու երկյուղով» (Բ Կորնթ. Է 1): Այդ պատճառով, երբ ճգնավորությամբ հեռանում ես կենցաղային գործերից եւ փրկվում ալեկոծ թշվառ կյանքից, ապա առավել եւս ջանա ընդհանուր ոչինչ չունենալ հպարտության անմաքուր ոգիների հետ, որպեսզի ընդունի քեզ Տերը: Քանզի՝ «Ամեն մեծամիտ պիղծ է Տիրոջ առջեւ» (Առակ. ԺԶ 5):

Մի՞թե չես խորհում այն կրակների մասին, որոնց միջոցով անցնելու ենք: Երբ այդ կրակների միջից անցնենք, եւ պարզվի, որ մաքուր ենք եւ հանդիմանանքից ազատված, ապա այդ դեպքում նոր կիմանանք մեր մասին, թե ինչպիսին ենք: Քանզի. «Յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրակը պիտի փորձի» (Ա Կորնթ. Գ 13), ըստ գրվածի, որովհետեւ կրակի փորձություն է լինելու: Հետեւաբար խոնարհամտությամբ աղոթենք Տիրոջը, որպեսզի ազատի մեզ գալիք բարկությունից եւ արժանացնի այն հափշտակությանը, ինչպես որ արդարները «հափշտակվելու-տարվելու են ամպերի վրայից օդում» (Ա Թես. Դ 17) փառաց Թագավորի մոտ, եւ որպեսզի հեզությամբ եւ խոնարհությամբ ժառանգենք երկնքի արքայությունը: Քանզի, ինչպես գրված է. «Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3), հետեւաբար, վա՜յ հպարտներին եւ մեծամիտներին, որովհետեւ նրանց համար է պատրաստվում կրակե հնոցը: Հպարտությունն իր մեջ պարունակում է հետեւյալը. «Իմ զորությամբ կկատարեմ եւ Իմ իմաստությամբ ու խելքով կվերացնեմ ազգերի սահմանները, կհափշտակեմ նրանց հարստությունները, կցնցեմ շեն քաղաքները, Իմ բազկով կհարձակվեմ բոլոր երկրների վրա՝ ինչպես հավաբնի վրա, եւ բոլորին կվերցնեմ՝ ինչպես մնացած ձվեր. ոչ ոք Իմ ձեռքից չի փրկվի, ոչ ոք Ինձ չի ընդդիմանա, բերանը չի բացի եւ ծպտուն չի հանի»: Այսպես ասաց Տերը. «Միթե կացինը կբարձրանա՞ առանց փայտահատի, կամ սղոցը վերեւ կելնի՞ առանց որ մեկը ձգի այն. այնպես էլ՝ գավազանը կամ ցուպը, եթե մեկը չբռնի այն: Այդպես չի կարող լինել»: Զորությունների Տերը քո պատվի վրա անարգանք է ուղարկելու, եւ քո փառքի վրա բոցավառ հուրն է բորբոքվելու» (Եսայի Ժ 13-16): Եվ նորից. «Մտքիդ մեջ ասում էիր. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր. կնստեմ բարձր լեռան վրա, հյուսիսի բարձր լեռների վրա. կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին»: Բայց ահավասիկ դժոխք ես իջնելու եւ երկրի խորքերը» (Եսայի ԺԴ 13-15):

Հետեւաբար, փախչենք հպարտությունից, ինչն ատելի է Տիրոջ համար, սիրենք խոնարհամտությունը, որի շնորհիվ բոլոր արդարները հաճելի եղան Տիրոջը: Քանզի մեծագույն պարգեւ է խոնարհամտությունը, մեծ փառք, մեծ հաջողություն եւ մեծ պատիվ է այն ձեռք բերելը: Նրա հետ կարող ես անսայթաք ընթանալ, նրա մեջ է ամենակատարյալ իմաստությունը: Մեծամտության պատճառով ստորացվեց փարիսեցին, իսկ խոնարհամտության շնորհիվ բարձրացավ մաքսավորը, որի հետ նաեւ մեզ պիտի Տերն արժանացնի հավիտենական մասի՝ բոլոր



արդարների հետ: Նրան վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

*Ռուսերենից թարգմանեց*
*Գայանե ԹԵՐԶՅԱՆԸ*

***Այս նյութի նախորդ համարում տպագրված հատվածի տակ եւս պետք է կարդալ. «Ռուսերենից թարգմանեց...»: Սխալմունքի համար խմբագրությունը հայցում է ընթերցողների ներողամտությունը:***

# ՈՒԽՏԱՆԷՍ

## (920/930 - 986)

*Սկիզբը՝ էջ 4*

Կյուրոնի ծածուկ նենգությունը բացահայտվում է նաեւ հայոց Աբրահամ վեհափառի՝ նրան գրած եւ նրանից ստացած նամակներում. «Հայոց կաթողիկոս տէր Աբրահամը տեսաւ Կիւրոնից [եկած] պատասխան նամակը եւ սրա մէջ իմացաւ Կիւրոնի նենգութիւնը, որ դեռեւս իր չար խմորը ծածկել էր իր մէջ, այսինքն՝ իրէական նենգութիւնը (որ ունէր Քաղկեդոնի անօրէն ժողովից)...» (II, ԽՉ, էջ 165):

Ուխտանեսից անպակաս է նաեւ հրէական գործոնի քննադատությունը՝ «Որովհետեւ հրէական հերձուածի հայհոյութեան չար սէրմը, որ հասաւ Քաղկեդոնի անիծեալ ժողովին նմանապէս նաեւ Լեւոնի պիղծ տոմարին, նա [Յոբնաղը] սերմանեց» (II, ԽԹ, էջ 168):

Եթե Կյուրոնը նախապես խորամանկում էր, ապա տեր Աբրահամի երրորդ նամակի պատասխանի մեջ արդեն ցույց է տալիս իր իրական դեմքը, ինչը Ուխտանեսը որակում է որպես «լրբախօսութիւն»: Սրանից հետո Կյուրոնը «մեր կողմից [վերջնականօրէն] մերժուեց»,- ավելացնում է Ուխտանեսը (II, ԿԱ, էջ 184): Իսկ դրանք այն ժամանակներն էին, երբ Հայաստանը թուլացել էր եւ 591-ին երկրորդ անգամ բաժանվեց Մորիկ ինքնակալի եւ պարսից արքա Խոսրովի միջեւ: Դրա համար Կյուրոնը դեն նետեց «մեր կողմի երկիւղը» եւ հակառակվեց: Հույներից սատարվելով՝ անգամ գահերեցություն էր պահանջում Աղվանքի նկատմամբ: Ուխտանեսը պարսավում է նրան՝ թող նշավակվի ու տարագրվի նրա «անհանճար ու անընտրելի միտքը», «նրա հերետիկոս լեզուն [թող] կապ ընկնի նենգութիւն խօսելուց, եւ նրա ծաղրական ու ցնորական մտքի խօսքերը իբրեւ ինչ-որ փշրանք հեռու թքելով՝ թողնենք եւ ջանանք խոպան դարձնել նրա դժնխընթաց ճանապարհը, որ նրան թւում է, թէ ուղիղ է» (II, ՀԱ, էջ 191):

Ուխտանեսը ներկայացնում է, թե ինչպես տեր Աբրահամն իր շրջաբերական նամակով իսպառ մերժում է Վրաց Եկեղեցին, բանադրում այնպես, ինչպես Քաղկեդոնից հետո մեր նախնիներն արեցին. «...մենք նոյնը վրացիների նկատմամբ հրամայեցինք [դնել, եւ ըստ այնմ]՝ ամենեւին չհաղորդկցուել նրանց հետ ո՛չ աղօթքով, ո՛չ կերակուրներով, ո՛չ ըմպելիքներով, ո՛չ բարեկամութեամբ, ո՛չ դայեակութեամբ, չգնա՛լ Խաչը աղօթելու, եւ ո՛չ էլ նրանց մեր եկեղեցիներում ընդունել, նաեւ ամուսնանալուց ամենեւին հեռու մնա՛լ...» (II, Հ, էջ 209): Եվ այսպես այնքան ժամանակ, մինչեւ կգան ճշմարիտ հավատի...



Նամակագրություններն ավարտելով («Գրուեցին եւ աւարտուեցին բոլոր նամակները...», II, Կ, էջ 183)՝ Ուխտանեսն անցնում է ընդհանուր հարցերի: Նա ներկայացնում է Հայոց Եկեղեցու ինը դասերը՝ պատրիարք, արքեպիսկոպոս, մետրոպոլիտ, եպիսկոպոս, քահանա, սարկավագ, կիսասարկավագ, կղերիկոս, գրակարդաց:

Հայոց կաթողիկոսությանը, որ Դվինում էր, հունաց մասում հակադրում են հակաթոռ Հոհանի, որը մերժվում է: «Իսկ Սիւնիքի տէրերը հայրապետական երկատուած աթոռը մերժեցին եւ չհամաձայնուեցին հնազանդուել հակառակութեան մէջ [գտնուողներից] որեւէ մէկին՝ իրենց առաջինի Պետրոս եպիսկոպոսի հրամանով, որն [իր] վախճանին մօտենալով՝ իր թեմին պատուէր տուեց, որպէսզի ձեռնադրութիւնը եւ օրհնութեան մեռոնը ստանան Աղուանքից, մինչեւ սուրբ Գրիգորի հայրապետական աթոռը միաւորուի» (II, ԿԳ, էջ 196): Աբրահամ վեհափառը կարողանում է միաբանել Աղվանքն ու Սյունիքը՝ որպես մեկ հոտ:

### ԱՐՎԵՍՏԸ

*Ոճի մասին* անդրադարձներ ունի: Դիմելով Անանիա Նարեկացուն եւ, ինչպես հարկն է, մեծարելով նրան՝ Ուխտանեսը նաեւ զգուշանում է. «Եթէ շաղակրատանք ու խօսքի պաճուճանք չհամարես...» (էջ 27), «Թէպէտ եւ խօսքի ընդարձակութիւնը մեզ չարչարանք է պատճառում...» (էջ 30): Շարադրանքի մեջ անցումներն ապահովում է համապատասխան ակնարկներով. «Բայց մենք վերադառնանք նոյն շարադրանքին», «Այժմ վերադառնամ իմ խօսքի շարունակութեանը» (I, ԿՁ, ԿԸ, էջ 193, 195):

Խորենացու հետեւությամբ՝ Ուխտանեսը եւս անդրադառնում է *ժողովրդական զրույցներին*: Տիգրանի որդի Բապ Տիրանի կերպարը կերտելիս գրում է, որ սրա «քաջութեան գովքը երգիչները երգում էին պարերգերի մէջ» (I, ԻԵ, էջ 9): Ըստ Խորենացու՝ ոչ թե Բաբ Տիրան, այլ Բաբ, Տիրան, Վահագն:

Այս ոգով «այլատեսակ եւ այլաբանօրէն» նա պատմում է նաեւ Արտավազդի մասին եւ այդ կապակցությամբ գրում. «Որովհետեւ այսպիսի հրաշքներ թոյլ տուեց վերագրել նրան [Արտաւազդին] եւ համարձակւում է տալ նաեւ նրա նմաններին, ինչը որ մարդկանց խաղերում, երգերում, առասպելներում, զրոյցներում, վիպասանութիւններում տարիներով ու ժամանակներով յետ է գնում՝ զարմացնելու լսողներին, թէ ինչպիսին էր Արտաւազդն իր թագաւորելու ընթացքում» (I, ԽԳ, էջ 66): Եվ, օգտվելով Խորենացուց (II, ԿԱ), պատմում է, թե ինչպես սա անցնում է Արտաշատ քաղաքի կամուրջը եւ գնում վարազներ ու վայրի էշեր որսալու, որսի աղմուկի մէջ «ինչ-որ ցնորքներից խելագար ձայներ լսեց, [եւ] երիվարի հետ շուռ գալով՝ ընկաւ ինչ-որ մեծ խոր տեղ, եւ խորասոյզ լինելով՝ անհետացաւ» (I, ԽԳ, էջ 66): Ապա հիշում է նաեւ Գողթան երգիչների առասպելաբանությունն Արտաշեսի մահվան կապակցությամբ եղած զոհերի եւ Արտավազդի անպատեհ խոսքի մասին. «Մինչ դու գնացիր, ամբողջ երկիրն էլ քեզ հետ տարար, ես այս աւերակների վրայ ո՞ւմ թագաւորեմ»:

*Հրաշքը* նաեւ Ուխտանեսի շարադրանքի մեջ կարեւոր տեղ ունի: Հրաշքը նա եւս ներկայացնում է շատ բնական եւ այն ձուլում ընդհանուր շարադրանքին: Օրինակ՝ Գրիգորի չարչարանքները, Տրդատի փոխվելը, բռնությամբ Կոստանդիանոսի վարակվելը եւ առողջանալը:

Հաջորդում է Տրդատ Մեծի քաջագործությունների նկարագրությունը՝ ըստ Խորենացու (II, ՀԹ). «Սա, ասում է, մի ձեռքով երկու վայրի ցուլերի եղջիւրներից բռնելով՝ գետին տապալեց՝ միաժամանակ վիզները կոտրելով: Ձիակառքի մրցութեան ժամանակ վարել կամենալով՝ հակառակորդը հմտութեամբ ցատկեց ընկաւ գետին, եւ Տրդատը, բռունցքով հարուածելով արշաւող կառքին, կանգնեցրեց [այն], որի վրա բոլորը զարմացան: Եւ դարձեալ Կարինոսի դէմ Կոռնակի պատերազմելու ժամանակ Տրդատի երիվարը վիրաւորուեց, եւ [նա] առնելով իր զենքերն ու ձիու սարուածքը՝ ուղղակի խորայատակով անցաւ լայնատարած Եփրատը դէպի իր զօրքը, ուր Լիկիանէսն էր»: Եվ այսքանից հետո Ուխտանեսը փառք է տալիս. «Փա՛ռք բոլոր արարածների կողմից փառաբանուողի փառքին. ամէ՛ն» (I, ՀՁ, էջ 107):

Ոճական առանձին ձեւերից առկա է *բառական հակադրությունը*, որ նրանից հետո հիմնավոր տեղ ունի Նարեկացու «Մատյան...»-ում: Ուխտանեսը գրում է. «Քանզի այնտեղ յղացաւ ցաւը, իսկ այստեղ ծնուեց անօրէնութիւնը, այնտեղ հիւանդացաւ հեծեծանքով ու քաղցով, իսկ այստեղ մեռաւ մեր [Սուրբ} Հոգու մահով» (II, ԿԲ, էջ 193):

Ուխտանեսի խոսքը թեեւ պատմողական է, բայց տեղ-տեղ դիմում է պատկերավոր խտացումների, ինչպես՝ խոժոռվել մտքում, արտասուքներով զղջալ (II, ԿԲ, էջ 193,194), «Նրա աղմուկի յիշատակը կորաւ» (II, ԿԴ, էջ 198):

Հաճախակի երեւում է նաեւ ինքը՝ կենդանի ներկայությամբ. «...մեզ ստիպում են տագնապալի չարչարանքով պատմելու միեւնոյն խնդրի մասին» (II, ԿԴ, էջ 197):

Ուխտանեսն իր տեղն ունի հայ մատենագրության մեջ, եւ ցավով պիտի արձանագրել նրա գրքի երրորդ հատվածի կորուստը, որ վրացիների հանգույն պետք է պատմեր ծայդ (ծայթ) կոչված ցեղի հավատուրացության մասին:

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

---

## ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ

# ՄԱՐՄԻՆ ԵՎ ՀՈԳԻ

## (մասնակի կրճատումներով)

*Սկիզբը՝ թիվ 3*

### ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չարությունը սկիզբ է առնում անսահման ինքնասիրությունից, քանզի ինքնասիրությունն ամենայն շահախնդրությամբ եւ հնարավոր բոլոր միջոցներով փնտրում է փառք ու պատիվ եւ նման բաներ: Եվ երբ չար մեկը տեսնում է իր ցանկության ճանապարհին որեւէ խոչընդոտ, խստորեն բարկանում է, տխրում եւ զայրանում այն մարդու դեմ, ով իրեն խանգարում է, ուստիեւ ջանում է գործի դնել իր զայրույթը: Չարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ վրեժխնդրության կիրք:



Չարությունը տարբեր կերպ է իրականացվում. առաջին՝ վնաս հասցնել այն մարդու կյանքին, ում նկատմամբ ոխ ունես, զազրախոսությամբ ու զրպարտությամբ վտանգել նրա առողջությունը: Չարացողը, երբ հնարավորություն չի ունենում որեւէ կերպ հագուրդ տալու իր վիրավորված ինքնասիրությանը, փորձում է ինչ-ինչ արատներ փնտրել իր մերձավորի մեջ եւ կեղծ լուրեր տարածելով՝ վարկաբեկել նրա բարի անունը, փոքր բաներից հորինում մեծը ու մեծացնում: Եվ հաճախ է պատահում, որ շատերը հանիրավի տրվում են այդ չար զրպարտություններին ու լուտանքներին:

Ոմանք հասնում են այնպիսի ոխակալության, որ չարը գործադրելիս պարծենում են, իբրեւ տեսեք, թե ես ինչպես նրան իր տեղը դրեցի. հետայսու թող ինձ լավ ճանաչի: Այսպիսի մարդկանց պետք է հիշեցնել վերոհիշյալ սաղմոսը. «Երբ չարագործ նեղիչներս եւ թշնամիներս մոտեցան ինձ՝ մարմինս ուտելու, նրանք թուլացան ու ընկան» (Սաղմոս ԻԶ 2):

Չարությամբ լցված մարդկանցից պրծում չկա, քանզի նրանք բազում տարաբնույթ ու թաքուն խորամանկություններ են բանեցնում դիմացինին, ում վրա չարացած են, թակարդը գցելու համար եւ չար խոսքով թե՛ մեկին, թե՛ մյուսին եւ թե՛ երրորդին փորձում գայթակղեցնել: Միակ փրկությունն աղոթքն է եւ Աստծո նախախնամության հանդեպ հույսը. Աստված ամենքին եւ ժամանակին կհատուցի:

Մի խոսքով՝ ով ուզում է փրկվել, պետք է մի կողմ դնի չարությունը, ների մերձավորին, քանզի ասված է. «Ներեցե՛ք եւ ներում պիտի գտնեք Աստծուց» (Ղուկ. Զ 37):

### ՆԱԽԱՆՁ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ուր հակառակություն եւ նախանձ կա, այնտեղ կա անկարգություն եւ ամեն չար բան» (Հակոբոս Գ 16):

«Եթե միմյանց խածոտեք եւ հոշոտեք, զգո՛ւյշ եղեք, գուցե թե միմյանց ոչնչացնեք» (Գաղ. Ե 15):

«Սնապարծ չլինենք՝ միմյանց գրգռելով եւ միմյանց նախանձելով» (Գաղ. Ե 26):

### ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Նախանձը մերձավորի բարության եւ բարօրության հանդեպ ունեցած մարդու տխրությունն է: Սա տանջող կիրք է: Մյուս մեղքերում ինչ-ինչ չափով, թեկուզ վաղանցուկ, հաճույք կա, իսկ նախանձի պարագայում մեղսագործը ե՛ւ մեղք է գործում, ե՛ւ միաժամանակ տառապում: Նախանձ



մարդն անում է այն, ինչը դեւն անգամ չի կարող անել. դեւը նախանձում է մարդուն եւ ոչ թե դեւին, իսկ մարդը մարդո՛ւն է նախանձում: Ով այս աշխարհն արհամարհում է եւ փնտրում է երկնային բարիքներ, խոցոտվածի նման այնտեղ տեղ չունի: Եթե նախանձում ես երկրավորին ու մարմնավորին՝ նրան արհամարհելով, ինչո՞ւ ես փնտրում երկնավորը: Մեծատոհմիկը կոշկակարի, դերձակի եւ նման արհեստավորների հասցեին արված գովասանքներին չի նախանձում, որովհետեւ գիտի, որ իրական փառաբանումը լավագույնն է ունենում: Ուստի ով հավիտենականին է ձգտում, ժամանակավորին չի կարող նախանձել:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

**ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ**

# ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 3*

Եվ երբ նա ավարտեց իր գրույցը, ես չվերադարձա խաղադաշտ, այլ ինձ տուն գցեցի եւ խնդրեցի մորս, որ Ավետարանը բերի, որովհետեւ ուզում էի անձամբ համոզվել: Հիշում եմ իմ խոսքերը. «Ես ուզում եմ ստուգել, որովհետեւ, եթե Ավետարանը ասում է այն, ինչն այդ հոգեւորականը, ես գործերս ավարտում եմ Աստծո հետ, Քրիստոսի հետ եւ դեն եմ շպրտելու իմ մկրտության խաչը»: Նախկինում, կարդալու փոխարեն, քանի որ ընդունակ տղա էի, հիշում էի, որ քահանան ասում էր, թե չորս Ավետարան կա, որից էլ ենթադրում էի, որ դրանք մեկը մյուսից կարճ պիտի լինեն, եւ եթե արդեն ժամանակ պիտի կորցնեմ Ավետարան կարդալու վրա, ապա լավ է փորձեմ ամենակարճից: Եվ այստեղ ահա բռնվեցի. բռնվեցի ոչ թե քահանայի, այլ Աստծո կողմից, քանի որ սկսեցի կարդալ Մարկոսի Ավետարանը, որը նախատեսված է հենց ինձ նման անկիրթ պատանիների համար: Ես սկսեցի դանդաղ կարդալ, քանի որ վարժված չէի հին ռուսերենին, եւ առաջին ու երրորդ գլուխների արանքում հանկարծ զգացի, որ սեղանի այն կողմում կանգնած է կենդանի Քրիստոսը: Ես Նրան չէի տեսնում, ոչինչ չէի շոշափում եւ ոչինչ չէի լսում: Ետ ընկրկեցի աթոռից եւ համոզվեցի, որ դա տեսիլք չէր, պատրանք չէր, այլ պարզ մի համոզվածություն, որ Նա դեմս կանգնած է: Եվ այդ ժամ ես մտածեցի՝ եթե դա այդպես է, ուրեմն այն ամենը ինչ խոսվում է Նրա մասին, պետք է որ ճշմարիտ լինի. եթե Նա մահացել է եւ այժմ կենդանի է, ուրեմն նշանակում է Նա Նա է, Ում մասին պատմում էր հայր Սերգին...

Ես սկսեցի Ավետարանը խառնիխուռն կարդալ, եւ մի քանի բան այդ ժամանակ ինձ ապշեցրին: Ես սովորել էի կյանքին նայել որպես մի ջունգլու. յուրաքանչյուր մարդ ինձ համար վտանգավոր էր, թշնամի. որպեսզի կարողանայիր գոյատեւել դարեսկզբի վտարանդիության ջունգլիներում, պիտի քարանայիր, դառնայիր ամուր, անխոցելի: Եվ ահա տեսնում եմ, որ Մատթեոսի Ավետարանում ասվում է. «Նա (Աստված) իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վրա» (Մատթ. Ե 45): Ես մտածեցի, որ եթե Աստված սիրում է ե՛ւ բարիներին, ե՛ւ չարերին, եւ ես էլ ուզում եմ լինել Աստծո հետ, ուրեմն ես եւս պետք է սկսեմ սիրել ոչ միայն բարիներին, որոնք ինձ սիրում են եւ լավ են վերաբերում, այլեւ չարերին, որոնցից ես վախենում եմ եւ առ այսօր ատում: Ես խորհեցի այդ մասին եւ որոշեցի՝ ինչ էլ որ անեւու լինեն ինձ մարդիկ, ես նրանց պիտի սիրեմ, որպեսզի լինեմ Քրիստոսի հետ. թող որ նրանք ինձ եռման ջրով խաշեն, միեւնույն է՝ ես նրանց սիրելուց չեմ հրաժարվի... Հաջորդ օրը, երբ փողոց դուրս եկա, նայեցի մարդկայրն հոծ խմբերին, որոնք շտապում էին կայարան (մենք այդ ժամանակ ապրում էինք քաղաքի մերձակայքում) եւ մտածեցի, թե Աստված է սրանց բոլորին ստեղծել, Աստված բոլորին էլ սիրում է, եւ ես էլ պիտի բոլորին սիրեմ... Սա եղավ իմ առաջին տպավորությունը: Սա ես ամբողջապես արտահայտել չեմ կարող. կարող եմ աղքատիկ խոսքերով արտահայտել միայն այն, թե ինչպես դա դրսեւորվեց, բայց հաղորդել, թե ինչ կատարվեց իմ հոգում, երբ ես հայտնվեցի Քրիստոսի առջեւ, ոչ մի կերպ չեմ կարող:

Ի՞նչ էր սա նշանակում: Սա նշանակում էր, որ հավատը, առաքյալի խոսքերով ասած, *հուսացված բաների հաստատումն* է (Եբր. ԺԱ 1): Քրիստոսին ես չտեսա, բայց Նրան հանդիպեցի եւ առ այսօր էլ միանգամայն վստահ եմ դրանում: Շուրջ 80 տարի է անցել, բայց ես վստահ եմ ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ:

Իսկ հետո ինձ հաջողվեց արդեն արտահայտել իմ հավատը, հաղորդել այն: Շատ տարիներ անց իմ ձեռքն ընկավ սուրբ Մակար Եգիպտացու գիրքը, ուր նա տալիս է հավատի փորձառության եւ այն խոսքերով արտահայտելու միջեւ առկա տարբերությունը: Նա ասում է, թե մի պահ պատկերացրեք, որ մութ գիշերվա մեջ պառկած եք մաքոքի վրա, որին տանում է ծովը կամ գետը: Ձեր գլխավերեւում անպարփակ երկինքն է, աստղերը, ձեզ ճոճում է ջուրը, եւ դուք ողջ էությամբ ապրում եք այդ քնեցումը: Իսկ հետո սկսվում է մակընթացությունը, եւ ձեր մաքոքը նետվում է ավազների վրա: Այդ պահին դուք արդեն չեք զգում մաքոքի քնեցնող ճոճանքը, սակայն ձեր էության մեջ այն դեռեւս ներկա է: Դուք գիտեք, որ այն եղել է, դուք շարունակում եք զգալ այն ձեր ներսում: Դա հենց այն պահն է, երբ հավատի փորձառությունից մենք անցնում ենք Նրա արտահայտությանը, կարողանում ենք խոսել այն մասին, ինչն ապրել ենք մեր ողջ մարմնով, մեր ողջ հոգով:

Եվ դա եկեղեցու շատ կարեւոր պահն է: Բոլոր առաքյալները, բոլոր սրբերը, բոլոր մեղավորները, որոնք ինչ-որ ժամանակ հպվել են Քրիստոսի՝ նույնիսկ *քղանցքին*, կարող են ասել. «Այդ պահին ինձ հետ ինչ-որ բան տեղի ունեցավ, այդ պահին ինչ-ինչ ապրում ունեցա, զգացի եւ կփորձեմ անուղղակի կերպով այն ձեզ հաղորդել...»: Իսկ ի՞նչ է նշանակում «անուղղակի»: Մենք բոլորս էլ կարողանում ենք խոսել, բայց ինչպե՞ս կարող ենք փոխանցել. մի՞թե մարդը կարող է ուղղակի հավատալ ինձ կամ էլ մեզանից մեկն ու մեկին, եթե մենք նրան ասենք. «Դա պատահել է ինձ հետ»: Չէ՞ որ կարող է՝ դու ստում ես, կարող է՝ սխալվում ես, կարող է՝ թվացել է: Ինչպե՞ս դա բացատրել... Ահա այդ ժամանակ էլ ես հիշեցի Ավետարանի այն հատվածը, երբ Քրիստոսը հարությունից հետո հայտնվում է Իր տասը աշակերտներին (Հուդան արդեն մահացել էր, իսկ Թովմասը նրանց հետ չէր): Նրանք դիմավորեցին Քրիստոսին եւ ցնծություն էին ապրում, որովհետեւ Նա ողջ էր, որովհետեւ մահը Նրա վրա իշխանություն չուներ, որովհետեւ Նա հաղթել էր չարին՝ մահին: Եվ հետո վերադարձավ Թովմասը, եւ նրան սկսեցին պատմել, որ տեսել են հարուցյալ Քրիստոսին: Խեթ նայելով նրանց՝ Թովմասն ասաց. «Եթե չտեսնեմ Նրա ձեռքերի վրա մեխերի նշանը եւ իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը Նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա» (Հովհ. Ի 25): Ինչո՞ւ: Որովհետեւ եղբայրներին նայելով՝ տեսավ, որ նրանց հետ որոշակի ոչինչ չի կատարվել: Այո՛, նրանք հրճվում էին, բայց մնացել էին նույն աշակերտները, ինչպես կային նախկինում: Թովմասը նրանց կերպարներում այլակերպություն չտեսավ: Այդ փոխակերպությունը տեղի ունեցավ



հետո, երբ նրանք ընդունեցին Սուրբ Հոգու շնորհները: Բայց քանի դեռ դա տեղի չէր ունեցել, Թովմասը չէր կարող հավատալ խոսքերին, որոնցում չէր տեսնում այն կտրուկ եւ որոշիչ փոփոխությունը:

Սա է ահա, որ մեզ հետ անընդհատ կատարվում է: Մեր՝ մեղավորներիս, որ երբեմն լուսավորվում ենք թույլ մի լույսով, ինչպես մոմն է վառվում ձեղնահարկում, եւ սրբերի, որոնք շողում են ինչպես Սերաֆիմ Սարովսկին էր փայլատակել Մոտովիլովի աչքի առաջ, միջեւ տարբերությունը, անշուշտ, հսկայական է: Բայց եթե մարդը կարող է մեր միջոցով, մեր մեջ տեսնել ինչ-որ լույս, եւ եթե նա, նայելով մեզ, տեսնի, որ մենք այնպիսին չենք, ինչպիսին բոլոր մարդիկ են, որ մեզանից հավիտենական կյանքի լույսն է թափվում, ապա այն ժամ նա կհավատա մեր խոսքին, ավելի ճիշտ՝ ոչ միայն մեր խոսքին, այլեւ մեզ: Քրիստոնեական մի հեղինակ ասում է, որ անհավատների եւ հավատացյալների միջեւ տարբերությունը պետք է ահռելի լինի, ինչպիսին քանդակի, արձանի եւ կենդանի մարդու միջեւ է: Արձանը կարող է սքանչելի լինել, սքանչելի ուզածդ մարդուց, բայց այն մնում է փայտ կամ քար: Մարդը կարող է անշուք լինել, բայց նրանում պիտի փայլի աստվածային լույսը: Նույն այդ հեղինակն ասում է, որ երբ անհավատը հանդիպում է որեւէ հավատացյալի, պիտի կանգ առնի եւ բացականչի. «Ի՞նչ է պատահել: Ես կարծում էի՝ պիտի հանդիպեմ մի արձանի, իսկ իմ առջեւ ահա մի արձան է, որը կենդանություն է առել, նա կենդանի է, շարժվում է, նա ինձ մի բան է փոխանցում, ինչը մինչ այդ չեմ տեսել»:

Սա է ահա Եկեղեցու էությունը՝ յուրաքանչյուր անձնավորության մեջ՝ ըստ նրա՝ Քրիստոսին մերձենալու, Քրիստոսի հետ հաղորդակցվելու, Սուրբ Հոգին ընդունելու չափով: Սա է տարբերությունը հավատացյալի եւ Եկեղեցուն խորթ անհավատի միջեւ: Սակայն «խորթ» մարդը եւս համարվում է *մարդ*՝ բառիս բուն իմաստով: Այդ մարդը, նման չոր փայտի, սպասում է այն պահին, երբ կայծն ընկնի, եւ ինքն իրեն սկսի այրվել: Նա իր անհավատությամբ չի դարձել «տմարդի». նա մի մարդ է, որ դեռեւս չի գտել կյանքի լիությունը: Մեզ՝ հավատացյալներիս, մեզ, որ հանդիպել ենք Աստծուն եւ Քրիստոսին, տրված է փայլել այնպիսի լույսով, ճառագել այնպիսի մի լույս, եւ պարտադիր չէ շլացուցիչ, այլ թեկուզ մի մոմի չափ, որ մեզ հանդիպածներն ասեն. «Այդ մարդու մեջ կա մի բան, որ մինչ այդ եւ ոչ մեկի մոտ ես չեմ հանդիպել»:

Սա Եկեղեցու էությունն է, սա նրա ճշմարիտ բնույթն է: Եկեղեցին այդ ժամանակ դառնում է այն, ինչը նրա բուն էությունն է՝ Քրիստոսի մարմինը, այսինքն՝ մարմնացյալ Աստծո՝ Աստծո Որդու մարմնի ներկայության շարունակությունը հազարավոր տարիների ու դարերի մեջ՝ մեզ տրված Հաղորդության խորհրդով եւ Սուրբ Հոգու ներկայությամբ: Եկեղեցին Քրիստոսի Հայտնությունն է, Հայտնությունը Սուրբ Հոգու, հայտնությունը հավիտենական կյանքի: Եկեղեցին մի վայր է, ուր մարդն ու Աստված միավորվում են, մի վայր է, ուր Աստված կարող է հանդիպել մինչ այդ Իրեն խորթ մարդու հետ նաեւ: Եվ սա է հրաշքը: Ահա թե ինչ է Եկեղեցին:

*Թարգմանությունը՝*
***Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ***

# ՔՈ ՀԱՐԵՎԱՆԻ ԴԵՄ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԻ՛ ՏՈՒՐ...

*Սկիզբը՝ էջ 6*

Այս պատվիրանը նպատակ ուներ մարդկանց միջից վերացնել այս չարիքը, որպեսզի լինեն երկյուղած եւ ճշմարտախոս: Չարախոսությամբ ու սուտ վկայությամբ մարդը մեծագույն չարիք է գործում, ուստի պետք է ճշմարտությունն ասել: Միջնադարյան շատ դատաստանագրքերում սուտ վկաների եւ զրպարտողների մասին հատուկ օրենքներ կային: Օրինակ՝ ասվում էր, որ այն չարիքը, որը սուտ վկան սուտ վկայությամբ կամենում էր հասցնել որեւէ մարդու, նույն չարիքով ինքը պիտի պատժվեր: Սուտ վկայության մեջ կա ինչ-որ կեղծ, թվացյալ հաջողություն, սակայն դա հաջողություն չէ, այլ սատանայական պատրանք: Նայենք մեր շուրջը. այսօր շատ սուտ վկաներ թվացյալ հաջողության են հասնում՝ վնասելով ու հեռացնելով որոշ մարդկանց այն ասպարեզներից, որոնց իրենք են ցանկանում տիրել, եւ «վայելում» են այն, ինչ իրենց չէր պատկանում: Սակայն մենք մերժե՛նք սուտ վկայությամբ մեզ համար «պատիվ, փառք, հաջողություն» ունենալը: Աստված արդար է եւ դատելու է մարդկանց: Մատթեոսի Ավետարանում Տերն ասում է. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար Դատաստանի օրը հաշիվ պիտի տան, որովհետեւ՝ քո խոսքերով պիտի արդարանաս եւ քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ 36-37): Խնդրենք Աստծուն, որ ողորմի մեզ, եւ արդեն այս կյանքում մեր խեղաթյուրված, ծռմռված կենցաղն ուղղի, առաջնորդի մեզ ճշմարտության, սրբության ճանապարհով: Իսկ մենք ուրախանանք՝ մարդկանց գովելով եւ ոչ՝ սուտ եւ կեղծ բաներ խոսելով:

**- Տե՛ր հայր, սուտ վկան կրում է իր պատիժը ե՛ւ այստեղ, ե՛ւ հանդերձյալում: Ինչպե՞ս:**

- Սուտ վկայի վնասը դառն ու դաժան է, քանի որ ողջ կյանքում պիտի դատվի իր խղճի կողմից: Յուրաքանչյուր մարդու հոգում կա բարոյականության օրենքը, խղճի ձայնը, որն անդադար հալածելու է իրեն: Կյանքում ինչ-ինչ նեղությունների մեջ ընկնելով՝ կհասկանա, որ դա մասամբ իր ստախոսության պատիժն է, քանի որ թեեւ արդարների հանդեպ ստոր կերպով վարվեց, «հաջողության» հասավ, սակայն Աստծո ամենատես աչքից ոչ միայն չվրիպեց, այլեւ պատժվեց: Սուտ վկայի պատիժը հոգեւոր է ու հավերժ: Աստվածաշունչը խիստ պատիժներ է սահմանում այս մեղքի մեջ հայտնված մարդկանց համար: Չզղջալու եւ չապաշխարելու դեպքում սուտ վկաներին ու բոլոր ստախոսներին սպասում են գեհենի հուրն ու հավիտենական տանջանքները: Հայտնության գիրքն ասում է. «Այնտեղ (երկնքի արքայություն) չպիտի մտնի ոչ մի չարակամ, պիղծ եւ ստախոս մարդ...» (Հայտն. ԻԱ 27):

**- Տե՛ր հայր, շատերն են մանուկ հասակում սովորում ստել եւ մեծանալով՝ այլեւս դառնում են ծայրագույն ստախոսներ: Արմատացած սովորությունը դառնում է երկրորդ բնություն, որից ազատվելն անհնար է թվում: Ի՞նչ կասեք այս մասին:**

- Նախ հարկ է նշել, որ մանուկ հասակում ծնողներն են սովորեցնում իրենց երեխաներին ստել՝ վախեցնելով նրանց ինչ-ինչ շինծու կերպարներով: Այս երեւույթն անմեղ է թվում, սակայն ստախոսության սկիզբն է: Ընտանիքում ստի խրախուսումը նույնպես կարող է կործանարար հետեւանքներ ունենալ: Ուրեմն հեռու մնանք ստից, լինենք ճշմարտախոս: Մաղթում եմ, որ աստվածային ճշմարտությունը Աստծո Սուրբ Հոգով հեղվի բոլոր մարդկանց սրտերի մեջ, որպեսզի հետեւելով ճշմարտությանը՝ արժանանանք հավիտենական կյանքին եւ անանց բարիքներին:

*Հյուրընկալեց*
***Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 16. 3. 2009 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**